7
ՀՈՒԼԻՍԻ
2020

Luys Լույս®

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈՒԼԵՐԸ, ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈՒԼԵՐԸ, ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Տիգրան Թորոսյան
Քաղաքական գիտությունների դոկտոր,
Հեռանկարային հետազոտությունների
և նախաձեռնությունների կենտրոն

Ապրիլին տեղի ունեցած ԼՂՀ նախագահական և խորհրդարանական ընտրություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում 2018թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո ստեղծվել է մի իրավիճակ, երբ կարգավորման տեսակետից Արցախում ու Հայաստանի Հանրապետությունում առանցքային դերակատարություն են ստանձնել անձինք, ովքեր նախկինում այդ գործընթացի հետ որևէ առնչություն չեն ունեցել կամ դուրս են եղել խնդրով անմիջականորեն զբաղվողների շրջանակից: Անհրաժեշտ գիտելիքների և փորձի ակնհայտ բացակայությունը պատասխանատու կառույցների ու պաշտոնյաների շրջանում, կայացած հայկական մասնագիտական միջավայրի բացակայությունը, վերջին տարիներին հակամարտության նկատմամբ տարբեր միջազգային ասպարեզներում ոչ բարենպաստ կարծիքների ձևավորումը՝ ինչպես հակամարտության բնույթի, այնպես էլ կարգավորման հնարավոր սցենարների վերաբերյալ, էապես ընդլայնում են մարտահրավերների շրջանակը և մեծացնում բացասական զարգացումների հավանականությունը:

Ակնհայտ է, որ բացակայում է մասնագիտական աշխատանքը գործընթացի ռազմավարական մոտեցումների ու մարտավարական քայլերի մշակման, ներպետական և միջազգային մակարդակով աշխատանքների պլանավորման և իրականացման ուղղությամբ, որի արդյունքում օգտագործվում են առերևույթ անսպասելի, «սենսացիոն» արտահայտություններ ու «գաղափարներ», որոնք ոչ միայն միտված չեն խնդրի լուծմանը, այլև կարող են պատճառ դառնալ անբարենպաստ զարգացումների ու վտանգավոր շրջադարձերի: Առավել ևս, որ խնդրի էության, պատմության, կարգավորման հիմունքների, իրավական ու քաղաքական չափումների վերաբերյալ հակառակորդի կազմակերպած

աղավաղումների հետևողական աշխատանքների արդյունքում շարունակաբար փոխվում են պատկերացումները ոչ միայն արտերկրում [1], այլև հայկական շրջանակներում [2]: Խնդիրն ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ ադրբեջանական կողմի հստակ ու կոշտ դիրքորոշումների պայմաններում բացակայում են հայկական կողմի (կողմերի) ոչ միայն համարժեք հակակշիռները, այլև դրանք ապահովող մոտեցումների ամբողջական հայեցակարգը: Հատուկ հիմնավորման կարիք չունի այն պնդումը, որ հայկական քաղաքական և «մասնագիտական» շրջանակներում խիստ մոտավոր և հաճախ աղավաղված պատկերացումներ կան կարգավորման գործընթացի, դրա տարբեր չափումների, տեսական հիմքերի, որպես հետևանք՝ փաստաթղթերի ու գործընթացների և անգամ բանակցային գործընթացի նշանակության մասին: Թույլ չտալու համար, որ կարգավորման գործընթացն ունենա անշրջելի վտանգավոր զարգացումներ և չկորցնելու համար անկախության երեք տասնամյակների ընթացքում զրկանքների ու հերոսական պայքարի շնորհիվ ձեռք բերված աննախադեպ արդյունքը՝ բռնազավթված Հայրենիքի մի մասի ազատագրումը, հարկ է հնարավորինս արագ մասնագիտական հիմքերի վրա դնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում բարենպաստ արդյունք ապահովելուն ուղղված գործունեությունը տարբեր մակարդակներում: Հոդվածում առաջարկվում է որպես սկզբնական քայլ դիտարկել կարգավորման գործընթացի փուլերը, բացահայտել դրանց ընթացքում հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան և արդյունքները,

---

[1] Օրինակ, Joint Statement by the Chair of Delegation, MEP Marina Kalurand, the European Parliament's Standing Rapporteur on Armenia, MEP Staian Basescu, the European Parliament's Standing Rapporteur on Azerbaijan, MEP Zeljana Zovko on a construction of a new highway between Armenia and Nagorno Karabakh, 10 June, 2020.
https://www.europarl.europa.eu/cmsdata/208877/KALJURAND_BASESCU_ZOVKO_Joint%20statement_new%20highway%20between%20Armenia%20and%20Nagorno%20Karabakh.pdf?fbclid=IwAR24WW-1AaTFoju8fCa4ikv2HJLJUG0UggW1U4y0YMS9SXzi8dwVEnlRGMw
Svante Cornell Brenda Shaffer, Occupied Elsewhere: Selective Policies on Occupations, Protracted Conflicts, and Territorial Disputes, January 2020, https://fdd-report-occupied-elsewhere-selective-policies-on-occupations-protracted-conflicts-and-territorial-disputes.pdf
Eli Lake, The World's Hypocrisy About Israel's Occupation of the West Bank, https://www.bloomberg.com/opinion/articles/2020-01-28/the-world-s-hypocrisy-about-israel-s-occupation-of-the-west-bank
Marco Siddi, The EU's Botched Geopolitical Approach to External Energy Policy: The Case of the Southern Gas Corridor, Geopolitics, 2019, 1.
Broers L.,The Nagorny Karabakh Conflict Defaulting to War, Research Paper, Chatham House, July, 2016. https://www.chathamhouse.org/publication/nagorny-karabakh-conflict-defaulting-war.

[2] Օրինակ, Kalfayan Ph. R., The Minsk Process: Behind the Words and Principles, https://mirrorspectator.com/2019/03/07/the-minsk-process-behind-the-words-and-principles/

քննարկվող բանակցային փաստաթղթի էությունը, մարտահրավերներն ու հնարավոր զարգացումները:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈՒԼԵՐԸ. ՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Այնպիսի երկրներում, ինչպիսին Հայաստանն է, տեղի ունեցող կարևոր և տևական գործընթացների դիտարկման ժամանակ ընդունված է դրանք բաժանել փուլերի՝ ըստ երկրի ղեկավարների պաշտոնավարման շրջանների[3]: Հետևաբար, Հայաստանի դեպքում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը կարելի է բաժանել 4 փուլերի՝ Լ. Տեր-Պետրոսյանի նախագահության, Ռ. Քոչարյանի նախագահության, Ս. Սարգսյանի նախագահության և Ն. Փաշինյանի վարչապետության: Ընդ որում, առաջին երեք փուլերի արդյունքների և վերջին փուլի ընթացքի ու հնարավոր հետևանքների գնահատման նպատակով հարկ է նրանց գրավոր ու բանավոր արտահայտած մոտեցումներից առանձնացնել հայեցակարգային դրույթները, քննարկվող տարբերակների (փաստաթղթերի) էությունը, ինչպես նաև նրանց վերաբերմունքը դրանց նկատմամբ:

1. Լ. Տեր-Պետրոսյանի հայեցակարգային մոտեցումները

Լ. Տեր-Պետրոսյանի նախագահության օրոք մեկնարկել է ԼՂ հակամարտության կարգավորման բանակցությունների գործընթացը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ դրա երեք համանախագահների միջնորդությամբ, որոնք ներկայացնում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի երեք մշտական անդամներ՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Ֆրանսիան: Հայաստանի առաջին նախագահի պաշտոնավարման ընթացքում հակամարտության երեք կողմերին՝ Հայաստանին, Ադրբեջանին և Լեռնային Ղարաբաղին ներկայացվել են (1997թ.) կարգավորման երկու համաձայնագրերի նախագծեր (հետագայում դրանք ստացել են «Փուլային» և «Փաթեթային» անվանումները): 1997թ. սեպտեմբերին մամուլի ասուլիսի ժամանակ հակամարտության կարգավորման և դրան առնչվող հարցերի վերաբերյալ իր տեսակետը ներկայացնելուց հետո բարձրացած քննադատության ալիքին ի

[3] Шестопал Е.Б. 2019. Проект длиною в четверть века. Исследование образов власти и лидеров в постсоветской России (1993-2018). – *Полис. Политические исследования*. № 1. С. 9-20. https://doi.org/10.17976/jpps/2019.01.02

պատասխան Լ. Տեր-Պետրոսյանը հրապարակեց «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը[4], որտեղ նա ձևակերպել է 4 հարցադրումներ, որոնց պատասխանները, իր կարծիքով, հայեցակարգային նշանակություն ունեն խնդրի կարգավորման համար և կարող են իրական բանավեճի առարկա դառնալ՝

«– Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է լուծվի պատերազմի՞, թե՞ խաղաղ բանակցությունների միջոցով.

– հնարավո՞ր է, արդյոք, հավերժորեն կամ թեկուզ երկար ժամանակով պահպանել ստատուս-քվոն և Ղարաբաղի խնդրի չկարգավորված վիճակը.

– Ղարաբաղին և Հայաստանին ձեռնտու է հարցի կարգավորվա՞ծ, թե՞ չկարգավորված վիճակը.

– հարցը պետք է լուծվի փոխզիջումո՞վ, թե՞ կողմերից մեկի պարտությամբ, և այդ դեպքում ո՞վ է լինելու պարտվող կողմը»:

Նա պնդում է, որ՝

«– պատերազմը պետք է բացառվի, ուստիև Ղարաբաղի հարցը պետք է լուծվի միայնումիայն խաղաղ բանակցությունների միջոցով.

– ստատուս-քվոն երկար ժամանակով պահպանել հնարավոր չէ, որովհետև դա թույլ չեն տա ո՛չ միջազգային հանրությունը, ո՛չ էլ Հայաստանի տնտեսական կարողությունները.

– Ղարաբաղին և Հայաստանին ձեռնտու չէ հարցի չկարգավորված վիճակը, որովհետև դա զգալիորեն խոչընդոտում է Հայաստանի, հետևաբար նաև Ղարաբաղի տնտեսական զարգացմանը, բարդություններ ստեղծում միջազգային հանրության և մանավանդ հարևան երկրների հետ հարաբերություններում, որոնք կարող են ճակատագրական նշանակություն ունենալ.

– Ղարաբաղի հարցի լուծման միակ տարբերակը փոխզիջումն է, որը նշանակում է ոչ թե մի կողմի հաղթանակ և մյուսի պարտություն, այլ հակամարտության հագեցման վիճակում ձեռքբերված հնարավոր համաձայնություն»:

Դրանց ավելացնելով հոդվածում բերված ևս մի քանի մոտեցում՝ պատկերը կամբողջականանա.

«Հայաստանն ու Ղարաբաղն այսօր ուժեղ են քան երբևէ, բայց հակամարտության չկարգավորման դեպքում մեկ-երկու տարի հետո անհամեմատ թուլանալու են: Այն, ինչ մերժում ենք այսօր, ապագայում խնդրելու, բայց չենք ստանալու, ինչպես բազմիցս եղել է մեր պատմության մեջ...

[4] Տեր-Պետրոսյան Լ., Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը: https://www.1in.am/2650577.html

Պետք է իրատես լինել և հասկանալ, որ միջազգային հանրությունը երկար չի հանդուրժելու Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրադրությունը, քանի որ այն սպառնում է տարածաշրջանային համագործակցությանն ու անվտանգությանը, ինչպես նաև Արևմուտքի նավթային շահերին: Վաղ թե ուշ կողմերին պարտադրվելու է կարգավորման մի փոխզիջումային ծրագիր, որը լինելու է ոչ թե հարցի իրավական, այլ քաղաքական լուծում, թեև աշխարհի ուժեղները դա հրամցնելու են որպես միջազգային իրավունքի օրինակելի դրսևորում...

Վտանգավոր մոլորությունն այն է, թե Ղարաբաղի հակառակորդը Ադրբեջանն է, որին կարելի է հեշտությամբ ծնկի բերել: Իրականում, սակայն, Ղարաբաղի հակառակորդը միջազգային հանրությունն է, որին մենք, փաստորեն, ձեռնոց ենք նետել...

Ո՞րն էր ավելի նախընտրելի՝ պահել Ղարաբաղը և կորցնել քարոզչական պատերազմը, թե՞ կորցնել Ղարաբաղը և փայլուն հաղթանակ տանել քարոզչության ասպարեզում»:

Ակնհայտ է, որ «մեկ-երկու տարի հետո»-ի, ինչպես նաև «ստեղծված իրադրության» միջազգային հանրության չհանդուրժելու վերաբերյալ կանխատեսումները չեն իրականացել անգամ 22 տարի հետո, իսկ «իրականում Ղարաբաղի հակառակորդը միջազգային հանրությունն է» հիմնազուրկ գաղափարի վտանգների վերաբերյալ փաստարկներ բերելն ավելորդ է:

Սակայն, քանի որ խնդրո առարկան հակամարտության կարգավորման յուրաքանչյուր փուլի համար հայեցակարգային մոտեցումների առանձնացումն է, պետք է փորձել դրանք գտնել ձևակերպված հարցադրումների պատասխանների հիման վրա: Հեշտ է նկատել, որ հարցադրումների զգալի մասն առնվազն կոռեկտ չէ, քանի որ խնդրի էությունը առաջադրվող այլընտրանքները չեն և լուծման այս կամ այն տարբերակի ընտրության հետ կապ չունեն: Մի՞թե հնարավոր է կասկածել, որ այն ժամանակ կամ այժմ Հայաստանի Հանրապետությունում կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կարող էր գտնվել կամ կգտնվի որևէ մեկը, ով պատերազմը կնախընտրի խաղաղությունից: Կամ մի՞թե որևէ մեկի նպատակը կարող է լինել ստատուս քվոյի ու չկարգավորված վիճակի պահպանումը: Հարցի լուծումը փոխզիջումով կամ կողմերից մեկի պարտությամբ լուծման մոտեցումն էլ այլընտրանք չի ներկայացնում: Բանակցային մեխանիզմը (փոխզիջումը) կամ պարտությունը հակամարտության լուծման նպատակ չեն կարող լինել և չեն կարող միմյանց հակադրվել այնպես, ինչպես չեն կարող հակադրվել «Ղարաբաղը պահելը» և «քարոզչական պատերազմը կորցնելը», քանի որ դրանք միմյանց բացառող գաղափարներ չեն: Արհեստական այլընտրանքների ձևակերպումը թույլ է տալիս

խուսափել իրական այլընտրանքների դիտարկումից և հիմնական հարցադրումներին պատասխանելուց: Հետևաբար, հայեցակարգային մոտեցումները պարզելու համար մնում են վերը նշված երկու հնարավորությունները՝ պարզելու քննարկվող փաստաթղթերի էությունը տվյալ փուլում և Հայաստանի ղեկավարի հայեցակարգային մոտեցումներն այդ փաստաթղթերի վերաբերյալ: Դրանցից առաջինն այն նախագծերի դիտարկումն է, որոնք ներկայացվել են Լ. Տեր-Պետրոսյանի պաշտոնավարման ընթացքում: Այդ ժամանակահատվածում քննարկվել են երկու փաստաթղթեր՝ «Փուլային» և «Փաթեթային», որոնք երկուսն էլ նախատեսում էին, որ Արցախը պետք է ունենա ԼՂԻՄ-ի սահմանները, լինի Ադրբեջանի կազմում և ԵԱՀԿ-ն պետք է վարձակալի Լաչինի միջանցքը՝ Հայաստանի հետ անխափան կապ ապահովելու նպատակով: Երկրի առաջին նախագահի հոդվածից վերը բերված մեջբերումները վկայում են, որ նա կողմ էր «Փուլային» տարբերակի ընդունմանը, որը Հայաստանի իշխանություններին ներկայացվել է 1997թ. սեպտեմբերին: Քանի որ առանցքային պաշտոններ զբաղեցնող Ռ. Քոչարյանը, Վ. Սարգսյանը և Ս. Սարգսյանը չէին ընդունում որևէ լուծում, որը նախատեսում է ԼՂ-ի որևէ կարգավիճակ Ադրբեջանի կազմում, նախագահ Տեր-Պետրոսյանն ընտրեց ամենաճիշտ լուծումը՝ սեպտեմբերյան ասուլիսով և «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածով նախաձեռնեց հասարակական քննարկում՝ հավանաբար ակնկալելով հանրային աջակցություն: Ինչպես հայտնի է, այդ ամենն ավարտվեց Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականով:

Հարկ է արձանագրել, որ նախագահ Տեր-Պետրոսյանի պաշտոնավարման ընթացքում հայկական զորամիավորումների տասնյակ հազարավոր նվիրյալների սխրանքների ու ժողովրդի տոկունության շնորհիվ ֆինանսական, տնտեսական, ռազմական տեխնիկայի և մի շարք այլ տեսակետներից անհավասար պատերազմում Ադրբեջանը ստիպված էր հրադադար խնդրել, ու գծվեցին շփման գծի այսօրվա սահմանները:

Այսպիսով, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի առաջին փուլում՝ Տեր-Պետրոսյանի պաշտոնավարության շրջանում, խնդրի լուծման հայեցակարգային մոտեցումներն էին՝

- Հայաստանն ու Ղարաբաղն այսօր ուժեղ են քան երբևէ, բայց հակամարտության չկարգավորման դեպքում մեկ-երկու տարի հետո անհամեմատ թուլանալու են: Այն, ինչ մերժում ենք այսօր, ապագայում խնդրելու, բայց չենք ստանալու,

- սպասում-քվոն երկար ժամանակով պահպանել հնարավոր չէ, որովհետև դա թույլ չեն տա ո՛չ միջազգային հանրությունը, ո՛չ էլ Հայաստանի տնտեսական կարողությունները.

- Ղարաբաղի հակառակորդը միջազգային հանրությունն է, որին մենք, փաստորեն, ձեռնոց ենք նետել,

- Ղարաբաղի հարցի լուծման միակ տարբերակը փոխզիջումն է...

Փոխզիջումն ընտրություն չէ լավի ու վատի միջև, այլ վատի ու վատթարի միջև:

Այդ մոտեցումների հիման վրա նա առաջարկում էր համաձայնություն տալ 1997թ. համանախագահների ներկայացրած «Փուլային» լուծման համաձայնագրին, որի համաձայն Լեռնային Ղարաբաղը պետք է լիներ Ադրբեջանի կազմում, ԼՂԻՄ-ի սահմաններով, ինքնավարության լիազորություններով:

2. Ռ. Քոչարյանի հայեցակարգային մոտեցումները

Ռ. Քոչարյանը ՀՀ նախագահի պաշտոնը ստանձնեց 1998թ.: Նրա պաշտոնավարման ընթացքում (1998-2008թթ.) համանախագահները կողմերին ներկայացրել են երեք նախագծեր՝ «Ընդհանուր պետություն», «Քի Ուեսթ», «Մադրիդյան սկզբունքներ»: Դրանցից առաջինը, թեև ԼՂ-ի համար նախատեսում էր ավելի լայն լիազորություններ, սակայն, փաստորեն, նույնպես Ադրբեջանի կազմում և մերժվեց: Երկրորդ տարբերակը քննարկվեց ամերիկյան Քի Ուեսթ բնակավայր հրավիրված ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևի հետ: Վերադարձից հետո մի քանի ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաներ հրաժարականներ ներկայացրեցին և Հ. Ալիևը մերժեց այդ տարբերակը: Որոշ ժամանակ անց նա մահացավ, և երկրի նախագահի պաշտոնը ստանձնեց որդին՝ Ի. Ալիևը: Տևական ժամանակ պահանջվեց համանախագահներից՝ նոր նախագիծ մշակելու համար, և 2007թ. նոյեմբերին Մադրիդում կողմերին ներկայացվեց «Մադրիդյան սկզբունքներ» անվանումը ստացած նախագիծը՝ որպես բանակցությունների հիմք[5]: Հետագայում հակամարտության բոլոր կողմերը (ՀՀ, ԼՂ, Ադրբեջան) համաձայնեցին այն հիմք ընդունել և մինչ օրս այն բանակցային սեղանին է: Այս փաստաթուղթը սահմանում է, որ ԼՂ հակամարտությունը պետք է կարգավորվի

[5] OSCE Minsk Group Co-Chairs issue statement on Nagorno-Karabakh, https://www.osce.org/mg/49237, 29 November 2007

Հելսինկյան եզրափակիչ ակտի երեք՝ ինքնորոշման իրավունքի, տարածքային ամբողջականության և ուժի ու ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքների հիման վրա: Հարկ է նշել, որ ինքնորոշման իրավունքի հիման վրա ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ արձանագրումը հեղինակավոր միջազգային կազմակերպությունների փաստաթղթերում սկսվեց 2005թ. ընդունված Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) 1416 բանաձևից[6], ապա այն տեղ գտավ դրա հետ ընդունված և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին ուղղված ԵԽԽՎ 1690 (2005) հանձնարարականին ի պատասխան նախարարների կոմիտեի ընդունած փաստաթղթի երկրորդ կետում[7]:

«Մադրիդյան սկզբունքներ» փաստաթղթի հետ կապված՝ կա մեկ հանգամանք, որն այս շրջանում շատ ուսանելի կարող է լինել ՀՀ և ԼՂՀ նոր իշխանությունների համար: Ի. Ալիևը փորձեց խորամանկել: Համաձայնություն տալով փաստաթղթին, որը լուծման հիմք է համարում երեք սկզբունքներ, որոնցից մեկը ինքնորոշման իրավունքն է, նա շարունակում էր հին ադրբեջանական «երգը»՝ Լեռնային Ղարաբաղը կարող է ինքնորոշվել, բայց Ադրբեջանի կազմում: Որոշ ժամանակ անց նա հասկացավ, որ որևէ լուրջ միջավայրում այդ պնդումը որևէ արժեք չունի, բայց հրաժարվել փաստաթղթից չէր կարող: Ադրբեջանական կողմը տևական ժամանակ ամեն ջանք գործադրում է իրավիճակը շտկելու՝ կա՛մ նոր նախագծի անցնելու, կա՛մ խնդրի կարգավորումն այլ միջազգային կազմակերպություն տեղափոխելու համար, սակայն ապարդյուն: Հետևաբար, գործընթացում նոր կարևոր դերակատարի մուտքը պետք է լինի շրջահայաց՝ զերծ պետք է մնալ հապշտապ գնահատականներից ու տեսակետներից, առավել ևս՝ որոշումներից, որոնց հետևանքները կարող են ծանր լինել:

Հարկ է նաև արձանագրել, որ այն չարագուշակ կանխատեսումներից որևէ մեկը, որոնք 1997թ. արվում էին Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մոտակա (1-2 տարվա) ապագայի վերաբերյալ, ոչ միայն չիրականացավ, այլև Ռ. Քոչարյանի նախագահության տարիներին զգալիորեն

[6] PACE RESOLUTION 1416 (2005). The conflict over the Nagorno-Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference

[7] The conflict over the Nagorno-Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference Parliamentary Assembly Recommendation 1690 (2005) (Reply adopted by the Committee of Ministers on 21 September 2005 at the 938th meeting of the Ministers' Deputies) CM/AS(2005)Rec1690-final 26 September 2005

ամրապնդվեցին ՀՀ և ԼՂՀ քաղաքական, իրավական, տնտեսական և սոցիալական հիմքերը:

Կարգավորման գործընթացի առնչությամբ միայն մեկ վերապահում է արվել ՀՀ երկրորդ նախագահի պաշտոնավարման փուլի վերաբերյալ: Նրան նախորդած իշխանության ներկայացուցիչները համարում են, որ իր նախագահության շրջանում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները ոչ թե ուղղակիորեն, այլ անուղղակիորեն են մասնակցել բանակցություններին՝ առանձին հանդիպումներ են եղել համանախագահների հետ: Բայց կան հանգամանքներ, որոնք այդ պնդումը դարձնում են անկարևոր՝

1) եղել է ԼՂՀ իշխանության համաձայնությունը, որ ԼՂՀ շահերն այդ քննարկումների ժամանակ ներկայացնի ԼՂՀ առաջին նախագահը,

2) Ռ. Քոչարյանի նախագահության շրջանի ավարտին բոլոր կողմերի համար ընդունելի բանակցային փաստաթուղթը արձանագրել է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը՝ որպես հակամարտության կողմ, իսկ համանախագահները բազմիցս հայտարարել են, որ բանակցությունների ավարտական փուլին Լեռնային Ղարաբաղը անպայման մասնակցելու է,

3) այդ ընթացքում որակապես փոխվել է բանակցային փաստաթղթում Լեռնային Ղարաբաղի համար նախատեսվող կարգավիճակը: Եթե նախորդ փուլում ներկայացված փաստաթղթերում արձանագրվում էր, որ ԼՂ-ն պետք է լինի Ադրբեջանի կազմում, ապա «Մադրիդյան սկզբունքներում»՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն է որոշում իր քաղաքական կարգավիճակը ինքնորոշման իրավունքի հիման վրա:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ թեև կարգավորման երկրորդ փուլի՝ Ռ. Քոչարյանի նախագահության ժամանակահատվածում հակամարտությունը չի կարգավորվել (նման կարճ ժամանակահատվածում չի կարգավորվել որևէ ինքնորոշման հակամարտություն), սակայն հաջողվել է հասնել բանակցությունների ռազմավարության փոփոխությանը:

Ի տարբերություն նախորդ փուլի, երբ միջնորդների առաջարկած կարգավորման նախագծերը նախատեսում էին Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակ՝ ԼՂԻՄ-ի սահմաններով, հաջողվել է բանակցային գործընթացը տեղափոխել սկզբունքորեն այլ հարթություն, բանակցությունների հիմք է ընդունվել «Մադրիդյան սկզբունքներ» փաստաթուղթը, ըստ որի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է որոշի Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա: Դա ապացուցեց 1997-98թթ. Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում թողնելու մոտեցմանը Վ. Սարգսյանի, Ռ.

Քոչարյանի և Ս. Սարգսյանի դիմակայության արդարացիությունը և լիարժեք իրավական հիմքեր ստեղծեց ԼՂՀ անկախության համար:

3. Ս. Սարգսյանի հայեցակարգային մոտեցումները

2008թ. ՀՀ նախագահի պաշտոնը ստանձնած Ս. Սարգսյանի պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում (մինչև 2018թ.) բանակցային փաստաթուղթը «Մադրիդյան սկզբունքներն» էին: Այդ ընթացքում պետք է կատարվեր տևական և մանրակրկիտ աշխատանք հակամարտության կարգավորման գործընթացի հիմնական սկզբունքների՝ որպես բանակցությունների հիմք, ամրապնդման և փաստաթղթային ամրագրման, ինչպես նաև օրակարգային 6 հարցերի («Մադրիդյան սկզբունքների» 6 տարրերի) համար լուծումների մշակման ուղղությամբ, որը դարձավ գործընթացի երրորդ փուլի՝ Ս. Սարգսյանի պաշտոնավարման ժամանակահատվածի առանցքային խնդիրը:

Որպես այդ փուլի մեկնարկում տեղի ունեցած կարևոր իրադարձություն՝ պետք է նշել 2008թ. ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում նախաձեռնության ստանձնումը ռուսական կողմից (ինչպես Քի Ուեսթի ժամանակ նախաձեռնություն ստանձնեց ԱՄՆ-ն), իհարկե, առաջարկվող լուծումները համանախագահների ներկայացրած սկզբունքների շրջանակում տեղավորվելու սահմանափակմամբ: Նախ, 2008թ. նոյեմբերի 2-ին Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահները ստորագրեցին Մայենդորֆյան (մոսկովյան) հռչակագիրը, որով արձանագրվում էին «Մադրիդյան սկզբունքների» ներկայացմամբ սկսված քննարկումների փուլի մեկնարկային պայմանները: Ըստ այդմ, Մայենդորֆյան հռչակագիրը անդրադառնում է ոչ թե խնդրի լուծման մեխանիզմներին, այլ սկզբունքներին: Փաստաթուղթն արձանագրում էր այն ստորագրող կողմերի համաձայնությունը, որ խնդիրը պետք է լուծվի միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի հիման վրա (կետ 1) և «կարևորում էր Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերի շարունակումը՝ հաշվի առնելով կողմերի հետ նրանց հանդիպումը Մադրիդում 2007թ. նոյեմբերի 29-ին և հետագա քննարկումները քաղաքական կարգավորման հիմնական սկզբունքների հետագա մշակումների նպատակով»[8] (կետ 2): Ակնհայտ է, որ դրանով ընդհանուր առմամբ տեղի ունեցավ 2007թ. նոյեմբերին համանախագահների ներկայացրած «Մադրիդյան

[8] Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации, http://kremlin.ru/supplement/232

սկզբունքներ» փաստաթղթի գրավոր ամրագրումը՝ որպես բանակցային գործընթացի հիմք: Հռչակագիրը կարևոր նշանակություն ուներ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ հայկական կողմերի համար: Մոսկվայի համար այն ձեռքբերում էր 2008թ. հնգօրյա ռուս-վրացական պատերազմով մեկնարկած աշխարհաքաղաքական նկրտումների տեսակետից, հայկական կողմերի համար կարևոր էր կարգավորման գործընթացի հետագա ուղղության կանխորոշումը՝ ամրապնդելով այդ գործընթացում ինքնորոշման իրավունքի կիրառման հիմքերը, որոնք սահմանված էին «Մադրիդյան սկզբունքներ» փաստաթղթում: Կարող է թվալ, թե Ադրբեջանը ևս հաջողություն արձանագրեց՝ ստանալով փաստաթուղթ, որը ստորագրել է Հայաստանը, սակայն չի ստորագրել Արցախը: Դա կարող էր ճշմարիտ լինել, եթե փաստաթուղթը ձևակերպեր լուծումները, այլ ոչ թե ստորագրող կողմերի մոտեցումները գործընթացի սկզբունքների վերաբերյալ: Հետևաբար, Ադրբեջանը սոսկ ներքաղաքական սպեկուլյացիայի հնարավորություն ստացավ՝ դեռևս թերագնահատելով ինքնորոշման իրավունքի արձանագրումը որպես կարգավորման սկզբունքներից մեկը և չտեսնելով դրա լուրջ բարդություններն իր համար:

Կարգավորման գործընթացի իրավական բաղադրիչի տեսակետից կարևոր իրադարձություն էր 2009թ. հուլիսին Լ'Աքվիլայում համանախագահող երկրների նախագահների հայտարարությունը [9] բանակցային փաստաթղթի հիմնական դրույթների վերաբերյալ: Առաջին անգամ պաշտոնապես հրապարակվեցին 2007թ. Մադրիդում ներկայացված բանակցային փաստաթղթի հիմնական դրույթները, ինչը հնարավորություն տվեց պաշտոնական տեղեկության հիման վրա գնահատել գործընթացի էությունը:

Մի քանի ամիս անց արվեց ևս մեկ կարևոր քայլ: 2009թ. դեկտեմբերին Աթենքում տարածված Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների և Ադրբեջանի ու Հայաստանի արտգործնախարարների համատեղ հայտարարության եզրափակիչ հատվածը արձանագրեց. «Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները... հայտարարում են իրենց երկրների պատրաստակամության մասին՝ հիմնական սկզբունքների վրա կատարվող աշխատանքներն ավարտելու վերաբերյալ, ինչպես դա նախատեսված էր Լ'Աքվիլայում համանախագահ երկրների նախագահների հայտարարությունում: Նախարարները կրկին հաստատեցին իրենց հավատարմությունը կարգավորման մնացած հարցերի լուծման ուղղությամբ

[9] Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, 10 July, L'Aquila, https://www.osce.org/mg/51152

ինտենսիվ աշխատանքին և համաձայնություն ձեռք բերելուն, որը հիմնված կլինի, մասնավորապես, Հելսինկյան եզրափակիչ ակտի ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության և ազգերի իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքների վրա»[10]: Այս փաստաթուղթը դարձավ Ադրբեջանի ներկայացուցչի ստորագրած առաջին վավերագիրը, որտեղ ուղղակիորեն արձանագրված էր, որ ԼՂ հակամարտության լուծման նպատակով պետք է կիրառվի ինքնորոշման սկզբունքը: Իսկ ***դա ակնհայտորեն հաստատում էր Ս. Սարգսյանի բազմիցս արած հայտարարությունները, որ բանակցային գործընթացի էությունն այն է, որ Լեռնային Ղարաբաղը երբեք չի լինի Ադրբեջանի կազմում***: Իհարկե, Ի. Ալիևը սկսել էր հասկանալ դա, սակայն հայտնվել էր անելանելի իրավիճակում: Մի կողմից՝ չէր կարող հրաժարվել տարիներ տևած բանակցությունների արդյունքներից, երբ միջանկյալ արդյունքներին հավանություն էր տվել (դա համարժեք կլիներ հայտարարությանը, որ Ադրբեջանի հետ բանակցություններն անիմաստ են և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի երեք անդամ միջնորդ պետությունները կարող էին լուծում պարտադրել իրենց ներկայացրած «Մադրիդյան սկզբունքների» հիման վրա, որը նույնպես տանելու էր ԼՂ անկախության ճանաչմանը), իսկ մյուս կողմից՝ հենց որ հրապարակվեր համաձայնագրի նախագիծը, պարզ կդառնար, որ դրա իրականացումը հանգեցնելու է ԼՂ անկախության ճանաչմանը: Ահա թե ինչու, ինչպես «Կազանյան փաստաթուղթը» (2011թ.), որը մոտ մեկ տասնյակ հանդիպումների արդյունքում ներկայացրել էր Ռուսաստանը, այնպես էլ հետագայում ի հայտ եկած մի շարք այլ նախագծեր, որոնք «Մադրիդյան սկզբունքներում» արձանագրված սկզբունքների շրջանակում խնդրո առարկա 6 տարրերի համար լուծումներ էին առաջարկում, մերժվեցին (հայկական կողմերի մարտավարության արդյունքում գրեթե միշտ դա ստիպված էր անել ադրբեջանական կողմը)**:** Ճիշտ է, Ադրբեջանն ընտրել էր «Կազանյան փաստաթղթի» մերժման «փափուկ» ձև՝ Կազանում եզրափակիչ հանդիպման ժամանակ ներկայացրեց փաստաթղթի մեկ տասնյակից ավելի փոփոխություններ, սակայն նպատակն այլ էր՝ թույլ չտալ, որ Ադրբեջանում իմացվի բանակցությունների իրական ուղղությունը: Պաշտոնական Բաքվին այլ բան չէր մնում, քան համանախագահների շատ կոշտ քննադատությունը, լուրջ ջանքերն ու տարատեսակ փորձերը՝ հակամարտության կարգավորման ձևաչափը փոխելու կամ գոնե «Մադրիդյան սկզբունքները» բանակցությունների գործընթացից դուրս մղելու ուղղությամբ:

[10] Joint Statement by the Heads of Delegation of the Minsk Group Co-Chair Countries and the Foreign Ministers of Azerbaijan and Armenia, Athens, December 1, 2009, OSCE Minsk Group issues statement, https://www.osce.org/mg/51685

Առանձնահատուկ անդրադարձի են արժանի 2016թ. ապրիլին Ադրբեջանի սանձազերծած Ապրիլյան պատերազմն ու դրա հետևանքները: Չնայած սպառազինության վրա Ադրբեջանի ծախսած հսկայական միջոցներին՝ հայկական զինված ուժերը զգալի կորուստներ պատճառեցին թշնամուն, ադրբեջանական կողմը չկարողացավ հասնել իր նպատակների իրականացմանը և դիմեց Ռուսաստանի միջնորդությանը՝ ռազմական գործողությունները դադարեցնելու խնդրանքով: Որպես Ադրբեջանի արկածախնդրությանը Հայաստանի դիվանագիտական արձագանքի հետևանք ձևավորվեցին Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի համաձայնությունները, որոնք կարևոր մեխանիզմ պետք է դառնային հրադադարի խախտումների և ուժի կիրառման փորձերի հասցեավորման, հետևաբար կարգավորման գործընթացում հայկական դիրքերի ամրապնդման համար: Ի. Ալիևին մնում էր միայն բողոքել. «Մեզ վրա ճնշումներ են գործադրվում՝ ստիպելու համար, որ մենք համաձայնենք ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Մենք շատ մանրամասներ չենք բացահայտում, քանի որ կան դիվանագիտության կանոններ: Բայց Ադրբեջանի սևացմանն ուղղված Արևմուտքի, տարբեր ոչ կառավարական կազմակերպությունների և երկրի ներսում «հինգերորդ շարասյան» արշավի հիմքում ընկած է ճնշումը՝ նպատակ ունենալով ստանալ Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման համաձայնություն»[11]:

Ճնշումներն Ի. Ալիևի վրա շարունակաբար մեծանում էին և պետք է տային իրենց արդյունքները:

Ս. Սարգսյանի պաշտոնավարման փուլի ամփոփումը պետք է արձանագրի, որ թեև այդ շրջանը բարդ էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մարտահրավերների տեսակետից (համաշխարհային տնտեսական ճգնաժամ, տարածաշրջանում աշխարհաքաղաքական մրցակցության և առճակատումների կտրուկ սրում՝ 2008թ. վրաց-ռուսական պատերազմ, Ադրբեջանի ռազմական ծախսերի անզուսպ աճ, 2016թ. Ապրիլյան ագրեսիա և այլն), սակայն հաջողվել է հետևողականորեն ապահովել այդ փուլի «Արցախը երբեք չպետք է լինի Ադրբեջանի կազմում» առանցքային հայեցակարգային գաղափարի իրականացման ընթացքը:

Կարգավորման գործընթացն այդ 10 տարիների ընթացքում կառուցվել է «Մադրիդյան սկզբունքների» հիման վրա՝ մի փաստաթղթի, որի սկզբունքներին ստիպված է եղել համաձայնել Ադրբեջանը և որի համաձայն Լեռնային Ղարաբաղի

[11] Алиев И., Азербайджан пытаются заставить признать независимость Карабаха, https://eadaily.com/ru/news/2016/10/07/aliev-azerbaydzhan-pytayutsya-zastavit-priznat-nezavisimost-karabaha

կարգավիճակը որոշում է Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը՝ ինքնորոշման իրավունքի կիրառմամբ, շարունակաբար ամրապնդելով հայկական կողմերի բանակցային դիրքերը:

Ավելին, չնայած վերոհիշյալ մարտահրավերներին, այդ փուլում ոչ միայն չեն իրականացել 1997թ. չարագուշակ կանխատեսումները՝ 1-2 տարի հետո երկրի թուլանալու և թելադրանքներին ենթարկվելու վերաբերյալ, այլև առկա տնտեսական, ռազմական, անվտանգային կարողությունները թույլ են տվել 2016թ. ապրիլին արժանապատիվ հակահարված տալ հերթական անգամ ռազմական ագրեսիայի դիմած Ադրբեջանին, ինչպես նաև արդյունավետ օգտագործել դրա հետևանքով ստեղծված պատեհ առիթը՝ Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի համաձայնությունների հիման վրա ստեղծելու հայկական դիրքերի ամրապնդման լուրջ նախադրյալներ:

Առանցքային նշանակություն ունեցող «Մադրիդյան սկզբունքների» էությունը, ընձեռած հնարավորությունները, խութերը, որոնց հաղթահարումը պահանջում է փորձ և գիտելիքներ, մանրամասն կներկայացվեն Հայաստանի Հանրապետության չորրորդ ղեկավարի մոտեցումները արձանագրելուց հետո:

4. Ն. Փաշինյանի հայեցակարգային մոտեցումները

Ն. Փաշինյանը իշխանությունը ստանձնեց 2018թ.: Հենց սկզբից նա փորձեց սեփական մոտեցումներ ներկայացնել կարգավորման գործընթացի վերաբերյալ, որոնք էապես տարբերվում էին նախորդների մոտեցումներից: Դրանցից, թերևս, առավել էականները հետևյալներն են.

-Լեռնային Ղարաբաղը պետք է մասնակցի բանակցային գործընթացին, ինքը լիազորված չէ ներկայացնելու Արցախի տեսակետը,

-Համանախագահները պետք է բացատրեն տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքի էությունը,

-Լուծումը պետք է բավարարի Հայաստանի, Ադրբեջանի և Արցախի ժողովուրդներին:

Քանի որ դրանք չեն ենթարկվում ընդհանուր տրամաբանության, հարկ է դիտարկել առանձին-առանձին: Առաջինը, որպես գործընթացի մեջ նոր ներգրավվող դերակատարի հայտարարություն, կարելի է հաջող համարել, բայց ոչ այն պատճառով, որ դրանից հետո միջնորդները կպաշտպանեն այդ մոտեցումն ու ԼՂ-ն անմիջականորեն կներգրավվի բանակցությունների գործընթացում: Ակնհայտ է, որ դա տեղի չի ունենա տեսանելի ապագայում, քանի որ առաջընթացի տևական

բացակայության դեպքում նրանք չեն ցանկանա կողմերի անհամաձայնության նոր գործոն ներմուծել: Սակայն նման քայլը նոր փուլի սկզբի արձանագրման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ինքնուրույնության ընդգծման առիթ կարող էր դառնալ: Մինչդեռ, հայտարարությունների հակասականությունն ու հայտնի սկզբունքների և նորմերի հետ համադրելիության բացակայությունը ստեղծում են անհարկի թե՛ ներքին, թե՛ արտաքին լարվածություններ ու վտանգներ: Ինչ վերաբերում է երկրորդին, ապա միջազգային իրավունքի նորմերի վերաբերյալ միջնորդներից մեկնաբանություն ակնկալելը տարօրինակ մոտեցում է և հակամարտությունների կարգավորման գործընթացներում նման բան գտնելը դժվար է: Ճիշտ հակառակը՝ մի քանի տասնամյակ է, ինչ միջազգային բանակցություններում կողմերի անձնակազմերի անբաժանելի մաս են կազմում մասնագիտական խմբերը և նրանք է, որ պետք է մեկնաբանեն փաստաթղթերն ու նորմերը: Կարելի է գոնե ծանոթանալ Կոսովոյի վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարանի կարծիքում[12] ներառված հարցի քննարկմանը մասնակցած պետությունների պատվիրակությունների կազմերի հետ: Միջնորդները պարտավոր չեն կողմերին տրամադրել խորհրդատվական ծառայություններ, նրանց խնդիրն է միջնորդության հաջողության ապահովումը և, հնարավորության դեպքում, իրենց երկրների շահերի անուղղակի պաշտպանությունն այդ առաքելության շրջանակներում: Մինչդեռ, մասնագիտական խմբի առկայության դեպքում մատնացույց կարվեր հակամարտությունների կարգավորման տեսակետից բացառիկ նշանակություն ունեցող ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը[13] (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 2625 (XXV) բանաձևով, 1970թ.), որն ունի կոդիֆիկացիոն առաքելություն և հստակ ու լիարժեք պատասխաններ է պարունակում հակամարտությունների և դրանց կարգավորման հարցերի վերաբերյալ:

Երրորդ մոտեցումը՝ լուծումը Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի ժողովուրդների համար ընդունելի լինելու մասին, չի տեղավորվում ոչ միջազգային իրավունքի, ոչ միջազգային բանակցությունների որևէ

[12] Accordance with International Law of the unilateral Declaration of Independence in Respect of Kosovo. ICJ Advisory Opinion, 22.07.2010

[13] Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operaation among States in accordance with the Charter of United Nations, https://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/2625(XXV)

տրամաբանության կամ սկզբունքի շրջանակներում: Ըստ միջազգային իրավունքի նորմերի (դրան մանրամասն անդրադարձ կլինի հաջորդ բաժնում) ինքնորոշման հակամարտությունների դեպքում կարգավիճակը որոշում է բացառապես ինքնորոշվող (տվյալ դեպքում՝ Արցախի) ժողովուրդը՝ իր կամքի ազատ արտահայտմամբ: Ցանկացած այլ ժողովրդի, պետության կամ կազմակերպության կարծիք կարող է հետաքրքիր լինել կամ չլինել ինքնորոշվող ժողովրդին, սակայն չի կարող պայման լինել լուծման համար: Մյուս տարբերակը բանակցությունների ժամանակ համաձայնության գալն է: Չի եղել ինքնորոշման որևէ հակամարտություն, որի համար լուծումը բավարարել է ինքնորոշվող ժողովրդին և մետրոպոլիայի ժողովրդին: Հաշվի առնելով ինքնորոշման հակամարտությունների բնույթը՝ կարելի է վստահաբար պնդել, որ առաջիկայում էլ նման բան հնարավոր չի լինի: Մասնագիտական մոտեցման տեսակետից բոլոր կողմերի ժողովուրդներին բավարարող լուծման մասին գաղափարը անիրատեսական և անպտուղ է՝ հղի բազմաթիվ վտանգներով: Այդ գաղափարը միջազգային իրավունքի սկզբունքների հետ կապելու փորձը հանգեցնում է ինքնորոշման հանրաքվեին մետրոպոլիայի ժողովրդի մասնակցությանը՝ դրանից բխող հետևանքներով: Քանի որ դա հակասում է միջազգային իրավունքի նորմերին և պարզ ողջամտությանն ու տրամաբանությանը, պետք է հուսալ, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունը կհրաժարվի այդ անպտուղ ու վտանգավոր, բայց «սենսացիոն» «գաղափարից» ու այլևս այն առաջ չի մղի:

Պատկերն ամբողջական լինելու համար հարկ է դիտարկել նաև 2020թ. փետրվարին վարչապետ Փաշինյանի ներկայացրած վեց կետերը, որոնք նա անվանել է *Մյունխենյան սկզբունքներ*.

1. Լեռնային Ղարաբաղը անկախություն է ստացել այնպես, ինչպես Ադրբեջանը:

2. Լեռնային Ղարաբաղը կոնֆլիկտի և բանակցային կողմ է, առանց որի հետ բանակցելու հնարավոր չէ լուծել կոնֆլիկտը:

3. Չկան տարածքներ, կա անվտանգություն. Լեռնային Ղարաբաղը չի կարող զիջել իր անվտանգությունը:

4. Հնարավոր չէ կոնֆլիկտը լուծել մեկ կամ երկու գործողությամբ. բանակցային գործընթացում անհրաժեշտ են «միկրո հեղափոխություններ», ապա «մինի հեղափոխություններ», ապա ճեղքում:

5. Հարցի որևէ լուծում պետք է ընդունելի լինի Հայաստանի ժողովրդի համար, Ղարաբաղի ժողովրդի համար, Ադրբեջանի ժողովրդի համար, և Հայաստանն ու Ղարաբաղը պատրաստ են լրջագույն ջանքեր գործադրել նման լուծում գտնելու համար: Այսպիսի պատրաստակամություն պիտի ցուցաբերի նաև Ադրբեջանը:

6. ԼՂ հարցը չունի ռազմական լուծում: Եթե որևէ մեկը կասի, որ հարցը ռազմական լուծում ունի, Ղարաբաղի ժողովուրդը կասի՝ ուրեմն այն վաղուց լուծված է:

Առաջին կետը վաղուց ապարդյուն օգտագործվող գաղափար է, որը կարող է որոշ տպավորություն թողնել ներքին լսարանի վրա, սակայն որևէ նշանակություն չունի կարգավորման տեսակետից, քանի որ չունի որևէ լուրջ հիմնավորում կարգավորման ոչ իրավական, ոչ քաղաքական մոտեցումների շրջանակում: Վարչապետի համար մոտեցումներ մշակող թեկուզ փոքր մասնագիտական խմբի առկայության դեպքում այս կետը չէր ընդգրկվի մոտեցումների մեջ: 2-րդ կետը միջնորդները չեն ժխտում (դրա հետևանքով է կարգավորման սկզբունքներում ներառվել ինքնորոշման իրավունքը՝ Ադրբեջանը և Հայաստանը վաղուց ինքնորոշվել են), սակայն ասում են, որ պատմական հանգամանքների բերումով այս փուլում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները անուղղակիորեն են մասնակցում բանակցություններին՝ առանձին հանդիպում են համանախագահների հետ, ներկայացնում են իրենց տեսակետները, իսկ խաղաղ կարգավորման համաձայնագրի մշակումը համանախագահների հետ կիրականացնեն Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի ներկայացուցիչները: 4-րդ մոտեցումը որևէ կոնկրետ գաղափար չի պարունակում և չի կարող սկզբունք համարվել: 5-րդի մասին վերը նշվեց, իսկ 6-րդը պարզապես հայտարարություն է, քանի որ մինչ այժմ և՛ ՀՀ-ն, և՛ ԼՂՀ-ն, և՛ Ադրբեջանը տարբեր բաներ ասել են, սակայն դրանից ոչինչ չի փոխվել: Երբ նման հայտարարություն անում են միջնորդները կամ ազդեցիկ որևէ պետություն, ապա ենթադրվում է, որ հակառակ դեպքում իրենք ինչ-ինչ միջոցներ կձեռնարկեն ռազմական գործողություններ ծավալվելու դեպքում: «Մադրիդյան սկզբունքները», որպես կարգավորման երեք սկզբունքներից մեկը, արձանագրել է ուժի և ուժի սպառնալիքի կիրառման անթույլատրելիությունը և դրա «նորարարական» տարբերակի կիրառման կարիք չկա: Առավել ևս՝ առաջարկվող ձևակերպմամբ, քանի որ «Լեռնային Ղարաբաղը կասի՝ այն [հարցը] արդեն լուծված է» արտահայտությունը ագրեսորին հետ չի պահի հերթական արկածախնդրությունից: Կողմերի նման հայտարարությունները որևէ նշանակություն չունեն հակամարտության կարգավորման տեսակետից, առավել ևս, որ ագրեսիվ կողմը՝ Ադրբեջանը, որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, պարտավորվել է առաջացած ցանկացած խնդիր լուծել միայն բանակցությունների միջոցով, խաղաղ ճանապարհով և չկիրառել ոչ միայն ուժ, այլև անգամ՝ ուժի սպառնալիք: Այլ բան է, որ անհրաժեշտ է լուրջ և հետևողական աշխատանք հակառակորդի կողմից այդ պարտավորության խախտման դեպքերն ու նախաձեռնություններն արձանագրելու և միջազգային հարթակներում դրանից բխող

արդյունքներ ապահովելու ուղղությամբ: Իսկ ագրեսորի ռազմական արկածախնդրության զսպման ընդամենը մեկ միջոց կա՝ մարտունակ, բարձր բարոյահոգեբանական պատրաստվածություն ունեցող զինված ուժերը, որոնք ագրեսորին ծանր կորուստներ կարող են պատճառել:

Մնում է 3-րդ կետը: Եթե սա կարգավորման սկզբունք է, ապա պետք է պարզաբանվի, թե ինչ սկզբունք է՝ քաղաքական, իրավական և այլն: Ինքնորոշման հակամարտությունների կարգավորման առանցքային հարցը ինքնորոշվող ժողովրդի բնակության տարածքի կարգավիճակի որոշումն է: Անվտանգության գաղափարի առաջմղումն առանց ինքնորոշման իրավունքի հիշատակման օրակարգից կարող է հանել ինքնորոշման տարածքի խնդիրը միայն այն դեպքում, երբ ինքնորոշվող կողմն ընդունի մյուս կողմի երաշխիքները և հրաժարվի ինքնորոշումից: Հակառակ դեպքում, քանի կա ինքնորոշման խնդիրը, անվերապահորեն հարկ է հստակեցնել, թե որ տարածքում է դա արվում՝ ըստ Մոնտեվիդեոյի կոնվենցիայի[14]: Ընդ որում, այդ տարածքը պետք է վերահսկելի լինի ձևավորվող պետության համար: Հակառակ դեպքում, անվտանգության խնդրով տարածքի խնդիրը փոխարինելու մոտեցումը պնդելով կարելի է հասնել այնտեղ, որ հակառակորդը խոստանա անվտանգության ցանկացած երաշխիք՝ դուրս մղելով ինքնորոշման գաղափարը:

Միգուցե, անվտանգության խնդրի առաջմղման գաղափարը վերցված է ֆրանսահայ իրավաբան Ռաֆֆի Կալֆայանի մի հոդվածից[15], որը տպագրվել է 2019թ. մարտին "*Armenian Mirror-Spectator*" պարբերականում և որին, որպես այս փուլում «Մադրիդյան սկզբունքների» այլընտրանք, անդրադարձ կլինի բանակցային փաստաթուղթը ներկայացնելուց հետո:

Ամփոփելով Ն. Փաշինյանի վարչապետության երկու տարվա ընթացքում ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի վերաբերյալ ներկայացված մոտեցումները, կարելի է արձանագրել, որ վերոհիշյալ 6 կետերը չեն կարող հակամարտության կարգավորման սկզբունքներ լինել: Դա է հաստատում նաև ավելի ուշ արված հայտարարությունը, որ այդ կետերը պետք է դիտարկել «Մադրիդյան սկզբունքների» համատեքստում՝ վերադառնալով ի շրջանս յուր: Թեև ակնհայտ է, որ այդ դեպքում էլ 6 կետերը ցաքուցրիվ են լինում՝ կա՛մ ավելորդ լինելու (2, 4 և 6 կետեր), կա՛մ անհարկի աղավաղումների (կետ 1), կա՛մ այդ սկզբունքների հետ անհամատեղելիության (3 և 5 կետեր) պատճառով:

---

[14] Montevideo convention on the rights and duties of states, http://www.taiwandocuments.org/montevideo01.html.

[15] Kalfayan Ph. R., նշվ. աշխ.:

Սակայն այդ ժամանակահատվածում հակամարտության հետ կապված մարտահրավերները նաև այլ բնույթ ունեն: Դրանցից ամենավտանգավորը հնչեցրեց Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը՝ ս.թ. ապրիլի 21-ին:[16] Գորչակովի անվան հանրային դիվանագիտության աջակցության ակումբում տեղի ունեցած կլոր սեղանի մասնակիցների հետ հանդիպման ժամանակ մասնակիցներից մեկի հարցին ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովի պատասխանի հետևյալ հատվածը իրարանցում առաջացրեց հայաստանյան քաղաքական և մերձքաղաքական շրջանակներում. «...Կան «Մադրիդյան սկզբունքները», ինչպես նաև փաստաթղթեր, որոնք պատրաստվել են 2010-2011թթ. Ռուսաստանի Դաշնության կողմից՝ այսպես կոչված «Կազանյան փաստաթուղթը»: Կան նախագծեր, որոնք տարածվել են մեկ տարի առաջ (անցած տարվա ապրիլին) Մոսկվայում, Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպման ժամանակ, որին մասնակցում էին համանախագահները: Դրանք այսօր ակտիվորեն քննարկվում են: Այդ փաստաթղթերը ենթադրում են շարժում դեպի կարգավորում՝ փուլային մոտեցման հիման վրա, առաջին փուլում նախատեսելով առավել արդիական խնդիրների լուծում՝ Լեռնային Ղարաբաղի հարակից մի շարք շրջանների ազատում և տրանսպորտային, տնտեսական և այլ հաղորդակցության ուղիների ապաշրջափակում»: Ճիշտ է, այս հայտարարությունը հնչեցված հարցի պատասխան էր, սակայն մի քանի հանգամանքներ վկայում են, որ այն ցանկալի էր Ս. Լավրովի համար: Հիմնադրամը, որը կազմակերպել էր հանդիպումը, հիմնադրվել է ՌԴ կառավարության նախաձեռնությամբ և դրա հոգաբարձուների խորհրդի անդամներ են մի շարք պետական պաշտոնյաներ, այդ թվում՝ Ս. Լավրովը: Մասնակիցները ևս պատահական մարդիկ չէին և չէին կարող անսպասելի հարցեր հնչեցնել: Հատկանշական է, որ Ս. Լավրովը հարցերին պատասխանելիս օգտագործում էր նախապես պատրաստված նշումներ՝ դրանք անակնկալ չէին: Քննարկումը նվիրված էր միջազգային հարաբերությունների զարգացման հնարավորություններին՝ ինտեգրման ուղղությամբ, և ակնհայտ է, որ ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ հարցը դուրս էր հանդիպման նախապես հայտարարված շրջանակներից ու ցանկության դեպքում այն կարելի էր շրջանցել: Ավելին, ի տարբերություն մյուս հարցերի, այն ոչ թե հնչեցրեց կլոր սեղանի մասնակիցը՝ ադրբեջանական «Թրենդ»

[16] Выступление и ответы на вопросы Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова в рамках заседания круглого стола с участниками Клуба поддержки публичной дипломатии им. А.М.Горчакова в формате видеоконференции, Москва, 21 апреля 2020 года, https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4103828

գործակալության ներկայացուցիչը (կապն ընդհատվեց), որին վերագրվում էր հարցը, այլ կարդաց հանդիպումը վարողը: Հանդիպմանը մասնակցող հայաստանցին Ս. Լավրովին հարց ուղղեց ավելի ուշ: Այն վերաբերում էր ԵԱՏՄ անդամ երկրներին վաճառվող ռուսական գազի գնին: Ընդ որում, հարցը ձևակերպված էր որպես Հայաստանի և Բելառուսի խնդիր՝ «մենք՝ Հայաստանում և Բելառուսում, տեսնում ենք...», և տարակուսանք էր հայտնվում, թե ինչպես է Մոլդովային ու Բուլղարիային գազ վաճառվում ավելի ցածր գնով, քան դաշնակից երկրներին: Տարօրինակ է, որ հայաստանցի մասնակիցը ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակի իրականացման սխեմայի մասին լսելով ոչ թե հարց հնչեցրեց դրա վերաբերյալ, այլ գազի գնի: Առավել ևս, որ պատասխանը՝ «դաշնակցային հարաբերությունները պետք է գործեն բոլոր ուղղություններով, այլ ոչ թե հիշվեն միայն այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է տրամագծորեն հակառակ 3-4 տարի առաջ եղածին» և դրան հաջորդած հիշեցումը Հայաստանում գործող ռուսական ձեռնարկությունների նկատմամբ վերաբերմունքի մասին, կարելի էր կանխատեսել առանց հարցը հնչեցնելու էլ: Անշրջահայացության ևս մեկ դրսևորում էր Բելառուսի հիշատակումը՝ հաշվի առնելով ոչ միայն ռուս-բելառուսական հարաբերություններում առկա լարվածությունը, այլև կարճ ժամանակ առաջ նույն ԵԱՏՄ-ում Լուկաշենկոյի կողմից Ադրբեջանի շահերի պաշտպանությունը՝ ի հակադրություն Հայաստանի շահերի:

Ակնհայտ է, որ երկու հարցերն ու դրանց պատասխանները փոխկապակցված են և պետք է դիտարկվեն նույն հարթությունում: Ընդ որում, երկուսի դեպքում էլ ակնհայտ է Հայաստանում երկու տարի առաջ տեղի ունեցած իշխանափոխությամբ պայմանավորված հանգամանքների ազդեցությունը: Հետհեղափոխական Հայաստանի արտաքին քաղաքականության հավասարակշռմանը մեկ տարի ապարդյուն սպասելուց հետո Ռուսաստանը 2019թ. ապրիլին փորձել է սթափեցնել՝ տարածելով փուլային տարբերակի նախագիծ, ինչը անթաքույց ազդանշան է, որ բանակցությունները կարող են վերադառնալ 90-ականների հուն, որը նախատեսում էր ոչ միայն տարածքների հանձնում Ադրբեջանին, այլև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակ Ադրբեջանի կազմում: Դրանից մեկ տարի անց արդեն հրապարակայնացվում է այդ վտանգը: Ճիշտ է, Հայաստանի արտգործնախարարության մամուլի խոսնակը հայտարարեց, որ բանակցային սեղանին փուլային տարբերակ չկա, սակայն ակնհայտ է, որ Լավրովը ոչ թե դա էր ասում, այլ զգուշացնում էր, որ դա կարող է տեղի ունենալ, եթե Հայաստանի արտաքին քաղաքականությունում գործընթացների տրամաբանությունը չփոխվի:

Քանի որ չորրորդ փուլի համար հնարավոր չէ հայեցակարգային ամբողջական մոտեցումներ ձևակերպել, մնում է արձանագրել Ն. Փաշինյանի վարչապետության երկու տարիների արդյունքները ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի հետ կապված՝

-ստեղծվել է տպավորություն, որ Հայաստանի իշխանությունները ժամանակ առ ժամանակ տարբեր «հեղափոխական» գաղափարներ ասպարեզ նետելով փորձում են ակտիվության պատրանք ստեղծել՝ նպատակ ունենալով ձգձգելու գործընթացը,

-համանախագահներից մեկի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների լուրջ վատթարացումը սկսել է ունենալ անցանկալի հետևանքներ և համապատասխան աշխատանքի բացակայության դեպքում հղի է լուրջ բարդություններով,

- 2016թ. Ապրիլյան պատերազմից հետո Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի հանդիպումների ժամանակ ձեռք բերված համաձայնությունների իրագործման հարցի դուրսմղումն օրակարգից ի չիք է դարձնում համապատասխան մեխանիզմների ներդրման պատեհ առիթը, ինչը թույլ կտար փաստարկել, որ սադրանքներով ու հրադադարի խախտումներով Ադրբեջանը բազմիցս ոտնահարում է կարգավորման գործընթացի հիմնական սկզբունքներից մեկը (ուժի և ուժի կիրառման սպառնալիքի),

- «լուծումը պետք է բավարարի ՀՀ, ԼՂՀ և Ադրբեջանի ժողովուրդներին» մոտեցումից շուտափույթ չհրաժարվելու դեպքում առաջիկայում պետք է սպասել տհաճ և վտանգավոր զարգացումներ,

-ինքնորոշման իրավունքի փոխարեն անվտանգության խնդիրների վրա մոտեցումների կառուցումը կարող է ձևախեղել բանակցային գործընթացը՝ այն վերադարձնելով առաջին փուլի ձևաչափին, որը նախատեսում էր ԼՂ կարգավիճակ Ադրբեջանի կազմում:

Քանի որ ներկայումս բանակցային սեղանին մնում են «Մադրիդյան սկզբունքները», հետևաբար հակամարտության կարգավորման գործընթացի հեռանկարները քննարկելու, հնարավոր մարտահրավերները հաղթահարելու և իրավիճակը բարելավելու նպատակով դրա ընձեռած հնարավորությունները օգտագործելու համար կարևոր է դիտարկել այդ փաստաթղթի էությունն ու առանձնահատկությունները:

«ՄԱԴՐԻԴՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ» ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ավելի քան 12 տարի բանակցային սեղանին գտնվող այս փաստաթղթի վերաբերյալ Հայաստանում տարաբնույթ կարծիքներ են հայտնում շատերը, ընդ որում, հաճախ պատկերացում չունենալով ոչ փաստաթղթի, ոչ էլ դրանում նշված սկզբունքների մասին: Դա նկատելի էր նաև Ս. Լավրովի ս.թ. ապրիլյան հայտարարությունից հետո: Այդ իրավիճակը ոչ միայն խառնաշփոթ է ստեղծում Հայաստանի քաղաքական և մերձքաղաքական շրջանակներում, այլև սկսել է լուրջ բացասական հետևանքներ ունենալ: Բայց մինչ փաստաթղթի բովանդակությանն անդրադառնալը, հարկ է հստակեցնել այն հիմքերը, որոնց շրջանակում կարելի է ողջամտորեն գնահատել այն: Գնահատումը պետք է իրականացվի բացառապես միջազգային իրավունքի նորմերի ու փաստաթղթերի շրջանակում, որոնք կոչված են կարգավորելու ինքնորոշման հակամարտությունները: Քննության առարկա պետք է դառնա Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների և նրանց ներկայացուցիչների ներկայացրած պաշտոնական փաստաթղթերը՝ մի կողմ թողնելով տարբեր «հավաստի աղբյուրներից» ստացված «վարիացիաները»: Կարելի է նշել երկու հրապարակված պաշտոնական փաստաթղթեր, որոնք ներկայացնում են վերջին 12 տարիների բանակցային գործընթացի հիմքը: Դրանցից մեկը 2009 թվականին Լ'Աքվիլայում հրապարակել են համանախագահող երկրների նախագահները, մյուսը՝ նույն բովանդակությամբ, 2019թ. մարտի 9-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ «նախագահ Ալիևի և վարչապետ Փաշինյանի առաջիկա հանդիպման կապակցությամբ»[17]: Ստորև բերված է վերջինիս համապատասխան հատվածը՝

«Մինսկի խմբի գործունեության բնույթի վերաբերյալ վերջերս արված հակասական հրապարակային հայտարարությունների առնչությամբ համանախագահները վերահաստատում են, որ արդար և տևական կարգավորումը պետք է հիմնվի Հելսինկյան եզրափակիչ ակտի առանցքային սկզբունքների վրա, ներառյալ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառումը, տարածքային ամբողջականությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Այն պետք է նաև

[17] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group on the Upcoming Meeting of President Aliyev and Prime Minister Pashinyan, Moscow, Paris, Washington, 9 March 2019, www.osce.org/minsk-group/413813

ներառի լրացուցիչ տարրեր, որոնք 2009-2012 թվականներին առաջարկվել են համանախագահ երկրների նախագահների կողմից, այդ թվում.

Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձը Ադրբեջանի վերահսկողության ներքո, Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակը՝ անվտանգության և ինքնակառավարման երաշխիքների ապահովմամբ, Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող միջանցքը, Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի ապագա սահմանումը՝ իրավական ուժ ունեցող կամարտահայտության միջոցով, բոլոր տեղահանված անձանց և փախստականների վերադարձի իրավունքն իրենց բնակության նախկին վայրեր, անվտանգության միջազգային երաշխիքները, որոնք ներառելու են խաղաղապահ գործողություն»:

Փաստորեն, 2007թ. նոյեմբերին տեղի է ունեցել բանակցային գործընթացի ռազմավարության փոփոխություն: Մի քանի անգամ խնդրի լուծման ամբողջական նախագծերի («Փաթեթային», «Փուլային», «Ընդհանուր պետություն») մերժումներից հետո միջնորդներն անցել են երկքայլ ռազմավարության. նախ, «Մադրիդյան սկզբունքներով» ամրագրել են բանակցությունների իրավական ձևաչափը (փաստաթղթի երեք սկզբունքները) և օրակարգը (վեց տարրերը), ապա դրանց շրջանակներում փորձում են ձևավորել երկրորդ փաստաթուղթը (խաղաղ կարգավորման համաձայնագիր), որը կսահմանի փաթեթային լուծում առնվազն վեց տարրերի համար: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ռազմավարության փոփոխությունն իրականացվել է այն պայմաններում, երբ ադրբեջանական կողմում փոխվել էր գլխավոր դեմքը՝ հայր Ալիևին փոխարինել էր որդին, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է գլխավոր դերակատարների փոփոխության շրջանում շրջահայացության ու զգուշության անհրաժեշտությունը:

Ստորև կդիտարկվեն «Մադրիդյան սկզբունքների» երկու գլխավոր բաղադրիչների առանձնահատկությունները:

1. Երեք սկզբունքները

Ինչո՞ւ են հիշատակվում Հելսինկյան եզրափակիչ ակտում ներառված 3 սկզբունքները՝ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառումը, տարածքային ամբողջականությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, և ինչո՞ւ է ներառված տարածքային ամբողջականության սկզբունքը, եթե այն ինքնորոշման հակամարտությունների կարգավորման հետ առնչություն չունի: Ղարաբաղյան հակամարտությունը բարդ գործընթաց է, որը ներառում է ոչ միայն ԼՂՀ-Ադրբեջան,

այլև ՀՀ-Ադրբեջան հարաբերությունները, քանի որ հակամարտության առնչությամբ տեղի են ունեցել ՀՀ (Արծվաշեն) և Ադրբեջանի (Քյարքի, Վերին և Ներքին Ասկիպարներ) տարածքների պատկանելության փաստացի փոփոխություններ, որոնց հետ կապված խնդիրները նույնպես պետք է ստանան իրավական կարգավորում: Ինչպես 2008թ. Բաքվում տեղի ունեցած ասուլիսի ժամանակ նշել է ֆրանսիացի համանախագահ Բ. Ֆասիեն, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը բաղկացած է երկու հակամարտություններից՝ Ադրբեջան-ՀՀ, որտեղ հարցերը պետք է լուծվեն տարածքային ամբողջականության շրջանակներում, և Ադրբեջան-ԼՂՀ ինքնորոշման հակամարտություն, որտեղ հարցերը պետք է լուծվեն ինքնորոշման սկզբունքի հիման վրա: Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքներն են նշված «Մադրիդյան սկզբունքներում», քանի որ Հայաստանը և Ադրբեջանն այդ կազմակերպության անդամ երկրներ են: Սակայն **պետք է նկատի ունենալ, որ ինքնորոշման հակամարտությունների կարգավորման հիմնական փաստաթղթերն են ՄԱԿ-ի կանոնադրությունը (որն ընդհանրապես միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների հիմնարար փաստաթուղթն է) և դրանից բխող և դրա հետ մեկ ամբողջություն կազմող Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին հռչակագիրը և ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 2625 (XXV) բանաձևով 1970թ., հետագայում՝ Հռչակագիր)**: Միաժամանակ, Հելսինկյան եզրափակիչ ակտում արձանագրված է, որ եթե հարց է առաջանում այդ փաստաթղթի որևէ դրույթի և ՄԱԿ-ի կանոնադրության որևէ դրույթի տարբերության վերաբերյալ, ապա գերակայություն ունի ՄԱԿ-ի կանոնադրությունը: Հետևաբար, Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների հիշատակումը համարժեք է ՄԱԿ-ի կանոնադրության և դրանից բխող համապատասխան փաստաթղթերի հիշատակմանը: 1975թ. ընդունված Հելսինկյան եզրափակիչ ակտից «Մադրիդյան սկզբունքներում» ներառված վերոհիշյալ երեք սկզբունքները, ինչպես նաև մյուս բոլոր սկզբունքներն այդ ակտում ընդգրկվել են ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրից: Անհրաժեշտ է ընդգծել, որ «Մադրիդյան սկզբունքներում» ընդգրկված երեք սկզբունքները բանակցությունների ժամանակ սակարկելի չեն, իսկ ինքնորոշման իրավունքը վերաբերում է կողմերից մեկին՝ ԼՂՀ-ին, քանի որ ՀՀ-ն և Ադրբեջանը արդեն ինքնորոշվել են: Այդ անփոփոխելի սկզբունքի արձանագրումը «Մադրիդյան սկզբունքներում» վկայում է, որ Ադրբեջան-ԼՂՀ հակամարտությունը ինքնորոշման է

ոչ միայն ըստ սահմանման, այլև դա ակամա ընդունել է Ադրբեջանը՝ մասնակցելով փաստաթղթի հիման վրա տեղի ունեցող բանակցություններին:

Ինքնորոշման իրավունքի արձանագրումը փաստաթղթի առանցքային գաղափարն է, ինչը Ադրբեջանն ըստ արժանվույն չընկալեց 2007թ. նոյեմբերին՝ համաձայնություն տալով, որ միջնորդների ներկայացրած փաստաթուղթը հայտարարվի կարգավորման հիմք: Պաշտոնական Բաքուն կարծում էր, թե փաստաթղթում տարածքային ամբողջականության սկզբունքի հիշատակումը թույլ կտա շարունակել իր դեմագոգիան՝ այո, Լեռնային Ղարաբաղը կարող է ինքնորոշվել, բայց Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակում: Ի դեպ, նման անհիմն կարծիք ոչ մեկ անգամ արտահայտում էր Հայաստանի խիստ հավակնոտ կուսակցություններից մեկի ներկայացուցիչը: Ավելի ուշ Ադրբեջանի ներկայացուցիչները հասկացան (կամ նրանց հասկացրին), որ դա անհեթեթություն է և տարիներ շարունակ ամեն ջանք գործադրում են «Մադրիդյան սկզբունքները» դուրս մղելու կամ խնդրի կարգավորումն այլ միջազգային կազմակերպություն տեղափոխելու համար: Ինչո՞ւ: Քանի որ միազգային իրավունքի շրջանակներում հակամարտություններին և դրանց կարգավորմանն առնչվող բոլոր խնդիրների սպառիչ պատասխաններ տվող 3 փաստաթղթերի վերոհիշյալ փաթեթը հստակորեն սահմանում է, թե ինչ է նշանակում «տարածքային ամբողջականության սկզբունք» և «ինքնորոշման իրավունք»:

Ըստ Հռչակագրի, որը միջազգային իրավունքում կոդիֆիկացիոն բնույթ ունի, տարածքային ամբողջականության սկզբունքի սահմանումը հետևյալն է. «Յուրաքանչյուր Պետություն միջազգային հարաբերություններում պարտավոր է զերծ մնալ ուժի սպառնալիքից և դրա կիրառումից ինչպես ցանկացած Պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության խախտման նպատակով, այնպես էլ որևէ այլ ձևով, որը համատեղելի չէ Միավորված ազգերի կազմակերպության նպատակների հետ»: Ակնհայտ է, որ այս սկզբունքը վերաբերում է միայն ՄԱԿ-ի անդամ երկրների միջև հարաբերություններին, որևէ առնչություն չի կարող ունենալ ինքնորոշման հակամարտությունների կողմերի միջև հարաբերությունների հետ, քանի որ միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերում Պետություն բառը գրվում է մեծատառով, երբ նկատի ունեն ՄԱԿ-ի անդամ երկրներին:

Հռչակագրի համաձայն. «ՄԱԿ-ի կանոնադրությունում ամրագրված ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքի ուժով բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն, առանց դրսից միջամտության, որոշելու սեփական քաղաքական կարգավիճակը և իրականացնելու իրենց տնտեսական,

սոցիալական և մշակութային զարգացումը և յուրաքանչյուր Պետություն պարտավոր է՝ Կանոնադրության դրույթների համաձայն, հարգել այդ իրավունքը»: Այս սահմանումն արձանագրում է, որ ինքնորոշման իրավունք ունեն անխտիր բոլոր ժողովուրդները՝ իրենց քաղաքական կարգավիճակն առանց որևէ միջամտության որոշելու համար: Քաղաքական մանիպուլյացիաները իսպառ բացառելու նպատակով Հռչակագիրը արձանագրում է. «Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացման ձևերն են ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, ազատ միացումը անկախ Պետությանը կամ միավորումը նրա հետ, կամ այդ ժողովրդի կողմից ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի ընտրությունը»: Ակնհայտ է, որ, օրինակ, Արցախի դեպքում կարգավիճակը որոշում է միայն Արցախի ժողովուրդը՝ կամքի ազատ արտահայտմամբ և այստեղ որևէ դերակատարություն չունեն ո՛չ Ադրբեջանը, ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ ցանկացած այլ Պետություն: Սակայն, համաձայն հռչակագրի, ՄԱԿ-ի անդամ «բոլոր Պետությունները պարտավոր են զերծ մնալ բռնի գործողություններից, որոնք վերոհիշյալ ժողովուրդներին կզրկեն այս սկզբունքում շարադրված իրենց ինքնորոշման, ազատության և անկախության իրավունքից: Այդ բռնի գործողությունների դեմ միջոցներ կիրառելիս և դրանց դիմադրելիս այդ ժողովուրդները, իրենց ինքնորոշման իրավունքի իրականացման շրջանակներում իրավունք ունեն հայցել և ստանալ աջակցություն Կանոնադրության նպատակների և սկզբունքների համաձայն»:

Մնում է ավելացնել, որ ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի համաձայն՝ ինքնորոշման իրավունքը միջազգային հարաբերությունների հիմնարար սկզբունքներից մեկն է և ունի համապարտադիր բարձրագույն իրավական նորմի՝*erga omnes* և *jus cogens* կարգավիճակ[18]:

2. Վեց տարրերը

Բանակցությունների առարկան հենց այդ 6 տարրերն են, այսինքն, դրանք ոչ թե լուծումներ են, այլ հարցադրումներ, որոնք կողմերի տարաձայնությունների առարկան են: Բանակցությունների նպատակն է լուծումներ գտնել այդ վեց հարցերի հետ կապված՝ երեք վերոհիշյալ անփոփոխելի սկզբունքների շրջանակներում: Ակնհայտ է, որ այդ 6 տարրերի համար լուծումներ գտնելը չափազանց բարդ գործ է, քանի որ հիմնական խնդրի՝ ԼՂ կարգավիճակի վերաբերյալ կողմերի պատկերացումներն

[18] Torosyan T., Conflict Resolution in the Framework of the International Law. Case of Nagorno- Karabakh. Yerevan, “Tigran Great”, 2010.

անհամատեղելի են: Ավելին, ինքնորոշման հակամարտությունների կարգավորման բանակցությունները որևէ դեպքում լուծումների չեն հանգեցրել: Հետևաբար, ոչ թե պետք է դժգոհել բանակցությունների անպտուղ լինելուց, այլ փորձել դրանց ընթացքում ամրացնել սեփական դիրքերը: Դա հատկապես կարևոր է, քանի որ 6 տարրերի ձևակերպումները ամենօրյա լուրջ աշխատանքի կարիք ունեն բոլոր ուղղություններով: Առավել ևս, որ դրանք փոխկապակցված են: Մասնավորապես, փախստականների վերադարձի հարցն ուղղակիորեն կապված է հանրաքվեի անցկացման հարցի հետ, դա էլ՝ 1991թ. անցկացված հանրաքվեի օրինակության, հետևաբար, վերջինս էլ կապված է հարցերի լուծման հերթականության հետ: Եթե այդ հանրաքվեն ճանաչվի լիարժեք, ապա ոչ միայն այլ ընթացք կունենա փախստականների վերադարձի հարցը, այլև օրակարգից դուրս կգա ԼՂ ժամանակավոր կարգավիճակի հարցը: Իսկ այդ ամենը մնալու դեպքում ինքնաբերաբար հետին պլան է մղվում կարգավիճակի որոշման հարցը, քանի որ այն լուծելը սկզբում դառնում է անհնարին: Ինչ վերաբերում է տարածքների խնդրին, ապա, ցավոք, գրեթե չի լսվում ՀՀ ներկայացուցիչների խոսքում Մարտակերտի ու Մարտունու շրջանների, Շահումյանի շրջանի ու Գետաշենի ենթաշրջանի գրավյալ տարածքների հարցը: Այս խնդրի հետ կարող է կապվել նաև Ադրբեջանից հայ փախստականների հարցն ու նրանց բնակության և փոխհատուցման հարցը: Կոպիտ սխալ կլինի կենտրոնանալ միայն կարգավիճակի խնդրի վրա՝ աչքաթող անելով մյուս տարրերը, քանի որ դրանք ոչ միայն հետևանքներ են, այլև միջոց՝ կարգավիճակի հարցն առաջ մղելու կամ հետաձգելու համար: Պարզունակ մոլորություն է միջնորդների վրա «լավ» տպավորություն թողնելու համար մեղմ մոտեցումներ ձևակերպելը կամ, ինչպես 2017թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական փուլում հայտարարում էր քաղաքական ուժերից մեկի առաջնորդը, տարածքները հանձնել՝ ակնկալելով, որ դա միջազգային հանրությունը կհամարի կառուցողական մոտեցում և կճանաչի ԼՂՀ անկախությունը:

Ինչպես ցույց է տալիս անգամ հոդվածի սահմանափակումների շրջանակում տարրերի շատ հակիրճ դիտարկումը, այդ խնդիրների լուծումների վերաբերյալ բանակցությունները բարդ և շատ լուրջ նախապատրաստական աշխատանք պահանջող տարրեր են պարունակում: Հետևաբար, կարևոր նշանակություն ունի նաև դրան նվիրված հասարակական քննարկումների որակը: Մասնավորապես, **«Մադրիդյան սկզբունքների» քննադատները ոչ թե պետք է թիրախ դարձնեն այդ տարրերը, այլ տվյալ պահին առաջարկվող լուծումները և ներկայացնեն այդ տարրերի վերաբերյալ իրենց առաջարկած մոտեցումները, բնականաբար, ոչ թե ըստ ցանկությունների, այլ՝ հիմնավորումների ու դրանց իրականացման**

սկզբունքների ու մեխանիզմների: Հաշվի առնելով նաև այն օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները, որոնք պետք է հաղթահարել այս կամ այն միջազգային կազմակերպությունում՝ որևէ առաջարկ առաջ մղելու համար:

Հասարակական քննարկումների արդյունավետությունը կարող են ապահովել ոչ միայն փաստաթղթերի իրական էության ճիշտ ընկալումները և առարկայական ու հիմնավորված առաջարկություններն ու մոտեցումներն, այլև հայկական կողմերի հայեցակարգային մոտեցումների հրապարակումը: Դա բոլորովին չի հակասում բանակցությունների խորհրդապահական բնույթին, քանի որ հարցը ոչ թե վերաբերում է բանակցությունների ժամանակ քննարկումների մանրամասների հրապարակմանը, այլ այն հիմնական դիրքորոշումներին, որոնք ՀՀ ներկայացուցիչները պաշտպանում են բանակցությունների ժամանակ:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ԻՆՔՆՈՐՈՇՄԱ՞Ն

Անցած ավելի քան 12 տարիների ընթացքում հայ իրականության մեջ տարաբնույթ կարծիքներ են հնչել «Մադրիդյան սկզբունքների» վերաբերյալ՝ որպես կարգավորման հիմքերը սահմանող փաստաթուղթ, ինչպես նաև արվել են տարաբնույթ առաջարկներ՝ կարգավորման գործընթացում հայկական դիրքերի բարելավման նպատակակետով: Այդ կարծիքների ու առաջարկների իրական արժեքը գնահատելու համար պետք է սահմանել այն չափանիշները, որոնց հիման վրա դա պետք է արվի: Առաջարկությունները և կարծիքները պետք է լինեն առարկայական: Եթե բանակցությունների ձևաչափը համարվում է անարդյունավետ, ապա պետք է նաև նշվի, թե որն է նոր, ավելի նախընտրելի հարթակը, ինչպես են բանակցությունները տեղափոխվելու այդ հարթակ և որոնք են երաշխիքները, որ այդտեղ որոշումները կլինեն ավելի հայանպաստ, քան գործող ձևաչափով: Այս գնահատումների հիմքում պետք է լինեն թե՛ ընդհանրապես հակամարտությունների կարգավորման գործընթացների փորձը, թե՛ միջազգային հարթակներում ուժերի դասավորությունը, թե՛ ԼՂ հակամարտության կարգավորման գրեթե երեք տասնամյակի փորձը: Միաժամանակ, պետք է ցույց տրվի, թե առաջարկվող քայլերն ինչ հիմքով և ինչ մեխանիզմներով է հնարավոր իրագործել: Որպես «Մադրիդյան սկզբունքների» այլընտրանք՝ ստորև կքննարկվի Ռ. Կալֆայանի վերոհիշյալ հոդվածում նկարագրված մոտեցումը, քանի որ, ի տարբերություն նման փորձերի ճնշող մեծամասնության, առաջին՝ համեմատաբար ամբողջական է, երկրորդ՝ դրա հեղինակը փորձել է հիմնավորել իր տեսակետները՝ անդրադառնալով միջազգային իրավունքի նորմերին ու փաստաթղթերին և երրորդ՝ այդ մոտեցումը, եթե անգամ ՀՀ

վարչապետի մոտեցումների նախատիպը չէ, ապա առնվազն հիշեցնում է դրանցից մեկը և, ըստ այդմ, հավելյալ հետաքրքրություն է ներկայացնում:

Ռ. Կալֆայանն այդ հոդվածում պնդում է, որ Հայաստանի նոր կառավարությունը հայտարարում է կարգավորման գործընթացի դրական զարգացումների մասին, սակայն ռազմական հռետորաբանությունն ու կարգավորման սկզբունքները առայժմ չեն փոխվել, Հայաստանի պահանջը, որ Արցախի ներկայացուցիչը մասնակցի բանակցություններին, չի կատարվել, Փաշինյանն ասում է, որ Ադրբեջանին ոչ մի տարածք չի զիջվի, բայց արտգործնախարարը բաց խոսում է զիջումների մասին: Միաժամանակ, նա կարծում է, որ հայկական կողմի համար պարզ չեն իր նպատակները, որ Մինսկի գործընթացը տապալվել է և Հայաստանը պետք է վերանայի իրավական պաշտպանության միջոցները և ֆորումները, որոնք օգտագործվում են ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում:

Պետք է նշել, որ հակամարտությունների կարգավորումը Ռ. Կալֆայանի մասնագիտական գործունեության ոլորտը չէ (ավելին, այդ ոլորտում հայտնի չէ նրա որևէ գիտական հրապարակում) և պետք է հուսալ, որ այդ հոդվածում առկա բազմաթիվ մեղանչումները՝ միջազգային իրավունքի, փաստերի, ազգային շահերի հետ կապված, միայն դրա հետևանք են, այլ ոչ թե ինչ-ինչ միտումների: Մինչ միջազգային իրավունքի փաստաթղթերի նրա կամայական մեկնաբանություններին ու շփոթություններին անցնելը, կարելի է բերել մեկ օրինակ, որը Հայաստանի քարտեզի մասին նվազագույն պատկերացում ունեցող ցանկացած մարդու համար ակնհայտ կդարձնի Ռ. Կալֆայանի, մեղմ ասած, անփույթ վերաբերմունքը պարզ փաստերին: Իր հոդվածի երրորդ ենթավերնագրի երկրորդ պարբերությունում, նշելով, որ ԵԱՀԿ շրջանակներում հակամարտության լուծման դեպքում պետք է կատարվեն ՄԱԿ-ի հայտնի 4 բանաձևերը, որոնք պահանջում են զորքերը դուրս բերել Զանգելանի, Աղդամի, Քելբաջարի շրջաններից և Հորադիզ քաղաքից, վերջում նա գրում է. «Այդպիսով, Հայաստանը կարող է կորցնել սահմանը Իրանի հետ...»: Չքննարկելով ՄԱԿ-ի բանաձևերի կատարումը ԵԱՀԿ շրջանակների հետ կապող, մեղմ ասած, խիստ կասկածելի գաղափարը, արձանագրենք՝ ՀՀ-ն ներառող ցանկացած քաղաքական քարտեզ գոնե մեկ անգամ տեսած ցանկացած մարդու համար ակնհայտ է, որ Իրանի հետ Հայաստանի սահմանը որևէ առնչություն չունի կամ չի կարող ունենալ այդ բանաձևերի կատարման հետ: Ցավոք, պարոն Կալֆայանի կոպիտ սխալները դրսևորվում են նաև միջազգային իրավունքի փաստաթղթերին անդրադառնալիս՝ դրանց վերագրելով գոյություն չունեցող իմաստներ ու նպատակներ: Դրանք հոդվածում շատ են, սակայն ստորև կդիտարկվեն միայն մի քանիսը, որոնք ուղղակիորեն առնչվում են ԼՂ հակամարտությանը: Նախ,

անդրադառնալով հակամարտությունների կարգավորման տեսակետից կոդիֆիկացիոն նշանակություն ունեցող փաստաթղթին՝ ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրին, Ռ. Կալֆայանը փորձում է կոպտորեն աղավաղել այն՝ նշելով. «Հռչակագիրը հաստատում է ժողովուրդների հավասարության և ինքնորոշման սկզբունքը, սակայն համապատասխանում է շահագրգռված պետությունների շահերին, հաստատելով տարածքային ամբողջականության սկզբունքը՝ կանխելով սեցեսիոնիստ շարժումների և խմբերի կողմից կեղծ մեկնաբանությունը»: Ընդամենը 4 էջից բաղկացած Հռչակագիրը ոչ միայն նման որևէ միտք, այլև «սեցեսիոնիստ շարժումների և խմբերի կողմից կեղծ մեկնաբանություններ» արտահայտություն չի պարունակում: Կալֆայանը փորձում է ինչ որ կերպ մեղմել Հռչակագրին չեղած նպատակներ վերագրելու իր փորձի հետևանքները և շարունակում է. «Բայց այն պետությունների համար պայման է դնում՝ դրանք պետք է ունենան կառավարություն, որը ներկայացնում է տվյալ տարածքի ամբողջ ժողովրդին: Հակառակ դեպքում ներկայացուցչականության սկզբունքների չպահպանումը կարող է, որպես ծայրահեղ միջոց, հարցականի տակ դնել տարածքային ամբողջականության հարցը»: Մինչդեռ Հռչակագիրը սահմանել է բոլորովին այլ բան: Ծավալուն սահմանումներով ձևակերպելով ինքնորոշման սկզբունքի էությունն ու կիրառման մեխանիզմները (դրանցից կարևորագույններին անդրադարձ կլինի), հռչակագիրն այդ սկզբունքին վերաբերող հատվածի նախավերջին պարբերությունում արձանագրում է.«վերը բերված կետերը չպետք է այնպես մեկնաբանվեն, որ թույլ են տալիս կամ խրախուսում են գործողությունները, որոնք հանգեցնում են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը, ինչպես դա նկարագրված է վերը, հարգող սուվերեն և անկախ Պետությունների տարածքային ամբողջականության կամ քաղաքական միասնության ամբողջական կամ մասնակի խախտմանը կամ մասնատմանը, որոնք ունեն այդ տարածքում ապրող ամբողջ ժողովուրդը ներկայացնող կառավարություն»: Այս սահմանման ուշադիր ընթերցումը միանշանակորեն ցույց է տալիս, որ Ռ. Կալֆայանը, միտումնավոր թե ակամա, կոպտորեն աղավաղել է Հռչակագրի էությունն ու մեջբերված կետը: Ակնհայտ է, որ այս նորմը երկու պահանջ է սահմանում անդամ պետությունների (Հռչակագրում, ինչպես ՄԱԿ-ի բոլոր մյուս փաստաթղթերում դրանք նշվում են որպես Պետություններ) համար՝ նախ, դրանք պետք է անվերապահորեն հարգեն Հռչակագրով ինքնորոշման սկզբունքի համար սահմանված բոլոր դրույթները, ապա, դրանց կառավարությունները պետք է ներկայացնեն այդ տարածքում ապրող ամբողջ

ժողովուրդը: Այսինքն, իրականությունը ճիշտ հակառակն է. ոչ թե տարածքային ամբողջականությունն է սահմանափակում ինքնորոշման սկզբունքը, այլ միայն այն անդամ Պետությունների տարածքային ամբողջականության մասին կարելի է խոսել, որոնք հարգում են ինքնորոշման իրավունքը: Տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառման շրջանակների մասին սպառիչ պատկերացում է տալիս Հռչակագրի հաջորդ պարբերությունը. «Յուրաքանչյուր Պետություն պետք է զերծ մնա ցանկացած գործողությունից, որն ուղղված է ցանկացած այլ Պետության կամ երկրի ազգային միասնության և տարածքային ամբողջության խախտմանը՝ մասնակիորեն կամ ամբողջությամբ»: Այս սահմանումը, որ կրկնվում է ՄԱԿ-ի մի շարք փաստաթղթերում, հստակորեն սահմանում է, որ այդ սկզբունքը գործում է միայն անդամ պետությունների միջև հարաբերությունների կարգավորման համար: Հոդվածի սկզբում անհասկանալի նպատակներով ստեղծելով վերը բերված խառնաշփոթը, Կալֆայանը չի նկատում, որ հետագայում հայտնվում է ծուղակում: Նախ, անդրադառնալով Կոսովոյի վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարանի կարծիքին[19], նշում է դատարանի պարզաբանումը. «տարածքային ամբողջականության սկզբունքի գործողության ոլորտը սահմանափակվում է Պետությունների միջև հարաբերություններով» և չի նկատում, որ այն պարզապես ջախջախում է իր կեղծ մոտեցումները, որոնք կառուցել էր հոդվածի սկզբնական մասում՝ կոպտորեն աղավաղելով Հռչակագրի դրույթները: Նպատակը մեկն է: Կեղծիքներով «հիմնավորել», որ «ինքնորոշումը գործընթաց է և տարածքային ամբողջականության պաշտպանության միջոց և դրա իրականացումը անհնարին է առանց սուվերեն պետության համաձայնության, քանի որ հիմնվում է ժողովրդավարական սկզբունքների և իրավունքի գերակայության սկզբունքների վրա»: Դրանից հետո Ր. Կալֆայանը արձանագրում է, որ «այդպիսին են ԵԱՀԿ պարտադրած և «Մադրիդյան սկզբունքներում» ամրագրված սկզբունքները» և «Հայաստանն արդեն երկար տարիներ լռում է դրա մասին»: Այս ամենը Ր. Կալֆայանին պետք է հավանաբար այն պատճառով, որ Հայաստանի ներկայիս իշխանություններին համոզի, որ «Մադրիդյան սկզբունքների» հիման վրա անհնարին է ԼՂՀ անկախությունը, անհրաժեշտ է փոխել բանակցություններում Հայաստանի դիրքորոշումը և դրա համար առաջարկում է իր «հայտնագործությունը»՝ Հայաստանի դիրքորոշումը պետք է կառուցված լինի ԼՂՀ բնակչության անվտանգության գաղափարի վրա: Բայց սոսկ անվտանգության գաղափարի վրա հիմնված որևէ սկզբունք չկա միջազգային իրավունքում, որը թույլ կտա անկախություն ստանալ:

[19] Accordance…, հղում 9:

Հավանաբար այս բանը լավ է հասկանում Ռ. Կալֆայանը և փորձում է որոշ մանիպուլյացիաների միջոցով ինքնորոշման սկզբունքը քողարկել՝ իր գաղափարի համար օգտագործելու նպատակով: Նախ, հնարում է անկախության 3 կեղծ չափանիշներ, որոնք որևէ արձանագրում չունեն միջազգային իրավունքում, ապա, ըստ դրանց, «ապացուցում է», որ Արցախը անկախություն չի կարող ստանալ: Ապա փորձում է օգտագործել որոշ հոդվածներում երբեմն կիրառվող մի գաղափար՝ ինքնորոշումը բաժանելով երկու տեսակի՝ referral և remedial: Հեշտ է համոզվել, որ միջազգային իրավունքում նման բաժանում գոյություն չունի, ինքնորոշումը տարատեսակներ չունի, որոնց դեպքում հակամարտության կարգավորման ելքը կարող է լինել տարբեր: Սակայն Կալֆայանին դա առանձնապես չի հետաքրքրում: Որոշ անհիմն դատողություններ անելով Կոսովոյի դեպքի վերաբերյալ, ապա բերելով մի շարք օրինակներ Ադրբեջանի հայատյացության վերաբերյալ, ի վերջո փորձում է ցույց տալ, որ Ադրբեջանում հայերի կյանքը չի կարող անվտանգ լինել և ԼՂՀ-ն պետք է անկախանա... ինքնորոշման իրավունքի կիրառման միջոցով: Լեռը երկնեց և մուկ ծնեց: Միջազգային իրավունքի փաստաթղթերին և հակամարտությունների կարգավորման գործընթացներին անծանոթ ընթերցողների վրա կարող է տպավորություն թողնել Կալֆայանի հոդվածը՝ տարբեր փաստերի մատնանշմամբ և փաստաթղթերի դրույթների կոպիտ աղավաղմամբ, հատկապես՝ ներկայանալով որպես իրավաբան: Բայց եթե դրանով սահմանափակվեր ամեն ինչ, ապա կարելի էր հատուկ ուշադրության չարժանացնել այն և միայն բարեկամական խորհուրդ տալ՝ փորձեք այդ «հայտնագործությունը» հրապարակել որևէ հեղինակավոր մասնագիտական հանդեսում: Մինչդեռ, կարծես թե ոմանք ոչ միայն ոգևորվել են այդ կեղծիքով, այլև այն խորհուրդ են տվել ՀՀ կառավարությանը: Համապատասխան մասնագիտական խմբի բացակայության պայմաններում դա կարող է ավերիչ հետևանքներ ունենալ: Պետք է հուսալ, որ այսպես կոչված «Մյունխենյան սկզբունքներում» անվտանգության գաղափարի առկայությունը և ինքնորոշման գաղափարի բացակայությունը պարոն Կալֆայանի «հայտնագործության» տխուր հետևանքը չէ, և հետագայում նման «գաղափարները» չեն սպրդի Հայաստանի պաշտոնական տեսակետը ներկայացնող մոտեցումների շրջանակ:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Էթնոքաղաքական հակամարտությունները կարող են լինել ինքնորոշման կամ ոչ ինքնորոշման՝ կախված այն բանից, թե ***ռազմական գործողություններում*** ինչ դերակատարություն է ունեցել կամ ունի ինքնորշման հայտ ներկայացրած կողմը: Ոչ ինքնորոշման հակամարտության օրինակ է Հյուսիսային Կիպրոսի դեպքը, որի համար Արդարադատության միջազգային դատարանը չի ճանաչում ինքնորոշման իրավունքը, մասնավորապես, դա արձանագրված է Կոսովոյի դեպքի վերաբերյալ իր կարծիքում: Չափանիշը հստակ է՝ ինքնորոշման չեն այն հակամարտությունները, որոնց ժամանակ ինքնորոշման մասին հայտարարող կողմը դիմում է ռազմական ագրեսիայի: Հետևաբար չափազանց կարևոր է հստակորեն ցույց տալ, թե տվյալ հակամարտության ժամանակ, եթե տեղի են ունեցել ռազմական գործողություններ, որ կողմն է այն նախաձեռնել:

Ինքնորոշվող ժողովրդի նկատմամբ մետրոպոլիայի իրականացրած բռնությունների, ագրեսիայի, ատելության քարոզի և նման այլ գործողությունների քաղաքականության բացահայտումն այն գործոններից է որոնք կարող են խթանել ինքնորոշման իրավունքի կիրառումը: ***Ինքնորոշվող ժողովրդի անվտանգության*** դեմ կատարվող ոտնձգությունների բացահայտման և հրապարակայնացման ուղղությամբ կատարվող քայլերի արդյունավետությունը լրացուցիչ, բայց կարևոր նշանակություն ունի ինքնորոշման իրացման բարդ և տևական ճանապարհին:

Ակնհայտ է, որ ինքնորոշման հակամարտությունների դեպքում առանցքային և առաջնային նշանակություն ունի ***կարգավիճակի հարցը,*** քանի որ մնացած հարցերը դրա հետևանքներն են: Մի շարք հակամարտությունների կարգավորման ժամանակ, ինչպես, օրինակ՝ Կոսովոյի դեպքում 2003թ., երբ փորձ է արվել նախ լուծել այլ հարցեր՝ հետաձգելով կարգավիճակի որոշումը, իրավիճակը սրվել է և վերսկսվել են ռազմական գործողությունները: Հետևաբար, ***հարցերի լուծման հաջորդականությունն*** ունի կարևոր նշանակություն և դրանց սխալ հերթականությունը ոչ միայն կարող է խափանել կարգավորման գործընթացը, այլև պատճառ դառնալ իրավիճակի սրման և անգամ ռազմական գործողությունների վերսկսման համար: Ցավոք, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում այս չափազանց կարևոր հարցը աղավաղվել է և վերածվել «փուլայի՞ն, թե՞ փաթեթային» իմաստազուրկ հարցադրմանը: Առանց ճշտելու հարցերի լուծման հաջորդականությունը՝ այս հարցադրմանը պատասխանելն անիմաստ է: Ընդունելի է այն տարբերակը, որի դեպքում առաջնահերթորեն լուծվում է կարգավիճակի հարցը:

Եթե մինչ կարգավորման գործընթացը ինքնորոշման հանրաքվե չի անցկացվել կամ անցկացվել է բնակչության զգալի մասի մասնակցությունը խոչընդոտող պայմաններում (ինչպես, օրինակ՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքերում), ապա կարգավիճակն առաջնահերթորեն որոշելուն կարող է լինել միայն մեկ խոչընդոտ՝ ***փախստականների խնդիրը***: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի դեպքում պատկերը բոլորովին այլ է: Ահա թե ինչու կարևոր է ոչ միայն կարգավիճակի հարցը, այլև այն բոլոր հարցերը, որոնք ծագել են որպես հակամարտության հետևանք: Հաջողություն ակնկալող կողմը պարտավոր է կարգավորման գործընթացի ողջ ժամանակահատվածում ակտիվորեն աշխատել ոչ միայն կարգավիճակի, այլև մնացած բոլոր հարցերի ուղղությամբ, մասնավորապես՝ ԼՂՀ-ում 1991թ. անցկացված ***հանրաքվեի օրինականության*** վերաբերյալ: Հեշտ է նկատել, որ, եթե այդ հարցը լուծվում է, ինքնաբերաբար օրակարգից դուրս է գալիս հանրաքվեի հետաձգման և դրանով պայմանավորված միջանկյալ կարգավիճակի հարցը՝ վերացնելով որոշ արհեստական խոչընդոտներ:

Ակնհայտ է, որ ***փարածքների խնդիրն*** ամենազգայուն հարցն է՝ կարգավիճակից հետո: Թեև հայտնի է, որ չկա ինքնորոշման հակամարտության որևէ դեպք, որտեղ կարգավիճակի խնդիրը լուծվել է բանակցային գործընթացում՝ կողմերի համաձայնությամբ, այդուհանդերձ նման հակամարտությունների դեպքում տևական բանակցություններն անխուսափելի են, քանի որ բանակցային հարացույցները, այդ թվում և 2 առավել հաճախ օգտագործվողները («խնդրի համատեղ լուծման»՝ Joint Problem Solving և «սակարկային»՝ Bargaining)[20] կարգավիճակի հարցի լուծում չեն ապահովում: Անխուսափելի են նաև ***փոխզիջումների***ի վերաբերյալ քննարկումները: ԼՂ հակամարտության կարգավորման բանակցությունները դրա վառ ապացույցն են: Սակայն տարօրինակ է, որ այդ բաղադրիչի մասին հաճախ խոսում են ՀՀ ներկայացուցիչները, սակայն, չնշելով, թե ինչ են ցանկանում զիջել և ինչի դիմաց: Մինչդեռ պետք էր խոսել այն առնվազն 3 զիջումների մասին, որոնք հայկական կողմերն արդեն արել են՝

1) համաձայնել են, որ բանակցային փաստաթղթով հակամարտության կողմ ճանաչված ԼՂՀ-ի շահերը սկզբնական փուլում ներկայացնի ՀՀ ներկայացուցիչը,

2) ԼՂՀ-ն ընտրել է ինքնորոշման իրացման ոչ թե ՀՀ-ին միանալու, այլ անկախ պետություն ստեղծելու ձևը,

[20] Hopmann, P. T. Two Paradigms of Negotiation: Bargaining and Problem Solving, *Annals of the American Academy of Political and Social Science*, 1995, Vol. 542, pp. 24–47.

3) համաձայնել են, որ 6 տարրերի շարքում քննարկվի նաև նոր հանրաքվեի անցկացման խնդիրը:

Հետևաբար, փոխզիջումների կապակցությամբ առայժմ խոսք կարող է լինել միայն Ադրբեջանի համարժեք զիջումների մասին: Բանակցային գործընթացը դիրքային պայքարի փուլ է, երբ կողմերից յուրաքանչյուրը ձգտում է բոլոր ուղղություններով բարելավել իր դիրքը, որպեսզի, երբ հասունանա լուծումը, այդ դիրքի շնորհիվ ապահովի իր համար ավելի շահեկան արդյունքներ:

Արցախի դեպքը զարմանալիորեն անթերի է բոլոր չափանիշների տեսակետից[21], սակայն պատշաճ վերջնական արդյունքի ակնկալումը պահանջում է բարդ, ամենօրյա դժվարին աշխատանք հակամարտության կարգավորման գործընթացի բոլոր ուղղություններով՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հոդվածի շրջանակներով թելադրված սահմանափակումների պատճառով արված խիստ հակիրճ վերլուծությունն անգամ վկայում է, որ.

1. ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը չափազանց բարդ ու տևական երևույթ է, որտեղ պահանջվում է խիստ համախմբվածություն, նպատակաուղղվածություն, ռազմավարական ու մարտավարական ծրագրերի մասնագիտական մշակումներ ու իրականացում, հատվածական շահերի, հների ու նորերի բաժանումների բացառում:

2. Թե՛ ՀՀ-ում, թե՛ ԼՂՀ-ում հակամարտության կարգավորման գործընթացում նոր դերակատարների ներգրավումն իշխանության փոփոխության արդյունքում օբյեկտիվ մարտահրավերներ է ձևավորում և բանակցություններին, անգամ

[21] Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում: Տիգրան Մեծ, Երևան, 2008թ.; Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն: Տիգրան Մեծ, Երևան, 2012թ.: Torosyan T., Vardanyan A. The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics*, 2015, No 3. Torosyan T. To the Resolution of Intractable Conflicts, *Iran and Caucasus,* vol. 17, No1, 2013, pp. 120-129. Թորոսյան Տ., Պետրոսյան Մ., Հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, *Հայկական քաղաքագիտական հանդես,* 2015, 1, էջ 135-159: Торосян Т.С., Варданян А.В. Концептуализация методологии сравнительного анализа успешности сецессий. *Полис. Политические исследования*. 2020. № 5. https://doi.org/10.17976/jpps/2020.05.07;

բանավեճերին առանց անհրաժեշտ գիտելիքների ու նախապատրաստության մասնակցությունը թուլացնում է դիրքերն ու վտանգներ ստեղծում անբարենպաստ լուծումների համար: Հետևաբար, հատկապես այդ շրջանում պետք է զերծ մնալ հեղափոխական քայլերի ձգտումներով ու չկշռադատված առաջարկներով պայմանավորված հախուռն գործողություններից:

3. Նոր դերակատարների ներգրավման մարտահրավերներն առկա են նաև միջազգային կազմակերպությունների կառույցների հետ հարաբերություններում: Պատահական չէ, որ արդեն արձանագրվում են վտանգավոր դրսևորումներ խորհրդարանական ձևաչափով (Եվրախորհրդարան, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով), ինչպես նաև ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում: Առայժմ վտանգավոր ձևակերպումները տեղ են գտնում առանձին կառույցների փաստաթղթերում՝ հակասելով կազմակերպությունների ընդհանրական մոտեցումներին, սակայն այդ երևույթները կանխարգելող աշխատանքի շարունակական բացակայությունը բարենպաստ կլինի նման ձևակերպումները կազմակերպությունների ընդունած փաստաթղթեր տեղափոխելու համար:

4. Հակամարտության կարգավորման վերաբերյալ հայկական կողմերի դիրքորոշումների հիմքում պետք է լինեն նման խնդիրների լուծման ժամանակակից հարթակներում կիրառվող տեսություններից ու մոտեցումներից բխող բառապաշար և սկզբունքներ, իրատեսական ուղիներ և իրական մեխանիզմներ: Ավանդաբար իրավիճակի, տեղի ունեցող իրադարձությունների և գործընթացի հեռանկարների գնահատման ժամանակ հայկական կողմերի և համանախագահների ձևակերպումներն ունեցել են բավականաչափ ընդհանրություններ, մինչդեռ վերջին շրջանում նման ընդհանրություններ նկատելի են համանախագահների և Ադրբեջանի ներկայացուցիչների ձևակերպումներում:

5. Ինչպես ինքնորոշման մյուս բոլոր հակամարտությունների դեպքում, ԼՂ հակամարտության դեպքում էլ, ամենայն հավանականությամբ, խնդիրը չի լուծվի բանակցությունների արդյունքում, քանի որ անգամ միջազգային ճանաչումից հետո տևական ժամանակահատված մետրոպոլիան չի ընդունում անկախ պետության ձևավորումը: Այդուհանդերձ, բանակցային գործընթացում դիրքային պայքարի հաջողությունը կարևոր նախադրյալ է վերջնական ավելի շահեկան լուծումներ ապահովելու համար:

6. Այդ պայքարում կարևոր նշանակություն ունի 90-ականների և 2016թ. պատերազմների, առաջին հերթին՝ երկու դեպքում էլ ադրբեջանական ագրեսիայի վերաբերյալ անհերքելի փաստերի շարունակական վավերագրումն ու հրապարակումը՝ ոչ միայն որպես կարևոր գործոն հակամարտության ինքնորոշման բնույթի առումով, այլև Ադրբեջանի հայատյաց քաղաքականության ակնառու դրսևորում:

7. Հայկական երկու պետությունների տարաբնույթ դժվարությունները (տնտեսության անկում, համավարակի վատթարացող վիճակ, չլուծված ներքաղաքական հարցերի կուտակումներ, երկրորդական հարցերով օրակարգի ծանրաբեռնում՝ առանցքային հարցերի դուրսմղումով, ատելության և ներքին լարվածությունների խորացում և այլն) մեծացնում են նոր սադրանքների և պատերազմի վերսկսման միջոցով խնդրի լուծման գայթակղությունն Ադրբեջանի համար:

8. Նոր աշխարհակարգի ձևավորման համար ծավալված մրցակցության թեժացումը և դրա ակնհայտ ազդեցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա ավելի է մեծացնում կողմերի հետագա քայլերի նշանակությունը և փոքրացնում սայթաքումների հետևանքների սրբագրման հնարավորությունը:

9. Հակամարտության կարգավորման գործընթացում ազդեցիկ երկրների դերակատարությունը բացարձակապես պայմանավորված չէ այն հանգամանքով, թե դրանցից որն է ավելի կամ պակաս ժողովրդավար: Համանախագահող երկրների հետ հարաբերություններում լուրջ խնդիրների առաջացումը, նրանց քայլերի մակերեսային ընկալումներն ու դրանց անլուրջ արձագանքները հղի են հետագա բարդացումներով, իսկ տևական ժամանակահատվածում դրանց պահպանումը՝ ծանր հետևանքներով:

10. Բանակցային գործընթացի սկզբնական տարիների անբարենպաստ ընթացքի (Ադրբեջանի կազմում ԼՂԻՄ-ի սահմաններով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակ նախատեսող «Փուլային» և «Փաթեթային» նախագծերով և դրանց ընդունման հորդորներով) բեկումը՝ կարգավիճակի որոշումը ԼՂ-ի ինքնորոշման միջոցով նախատեսող «Մադրիդյան սկզբունքների» միջոցով և դրա պահպանումը բանակցային սեղանին, շրջադարձային էր այդ գործընթացում, սակայն դեռևս սպասվում է ահռելի աշխատանք նախագծի 6 տարրերի ուղղությամբ ցանկալի լուծումներ ունենալու համար:

11. ԼՂ հակամարտության կարգավորման արդյունքը ոչ միայն կենսական նշանակություն ունի հայության ինքնության պահպանման և աշխարհում արժանապատիվ տեղ ունենալու տեսակետից, այլև հայկական երկու պետությունների կենսունակության ամենալուրջ փորձությունն է: Հակամարտության կարգավորման արդարացի և բարենպաստ արդյունք հնարավոր է ակնկալել միայն ամենօրյա բարդ, բազմավեկտոր մասնագիտական աշխատանքի դեպքում՝ դրանով ապահովելով բանակցային թիմի անհրաժեշտ բարձր պատրաստվածությունը: Այդ թիմի հաջողությունը պայմանավորված է լինելու նաև ներքաղաքական իրավիճակով, որը պետք է զերծ լինի ազգային ինքնությունն ու միասնությունը պառակտող և քայքայիչ գաղափարների տարածման, քաղաքական կյանքում ներքին թշնամիների կերպարների ձևավորման մոտեցումներից, կառուցվի պետական կառավարման մարմիններում և գերակա ոլորտներում մասնագիտական հետազոտությունների միջոցով բացահայտված խնդիրների ու դրանց լուծումների ներուժ ունեցող գաղափարների վրա հիմնված ծրագրերի իրագործմամբ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*